Եվս մեկ քայլ՝

# ԲԻԶՆԵՍԻՆ ԸՆԴԱՌԱՋ










եռամսյա պարբերականությամբ
հրապարակվում է
«Հարկատու» ամսագիրը

# Հարկատու

ԼՂՀ ԿԱ ՀԱՐԿԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ

№1(7) 2012




## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

## ՇԱՊԻԿ

**24** ԲԱՑԱՏՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ, ՀԱՍՑԵԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ
Ստեփանակերտի հարկային տեսչության գործելաոճն է

**36** ԹՌՉՆԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՏԵՍԱԿ՝ ԱՐՑԱԽՈՒՄ
Ջայլամաբուծությունը լավ հեռանկար է խոստանում

**46** ԵՐԿՆԱԳՈՒՅՆ ՎԱՌԵԼԻՔԻ ՊԱՀԱՆՋԱՐԿՆ ԱՎԵԼԱՆՈՒՄ Է
Անվտանգ գազամատակարարումն առաջնային է «Արցախգազ»-ի համար

ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՈՒՄԻՑ ՄԻՆՉԵՎ ՀԱՆՐԱՅԻՆ ԻՐԱԶԵԿՈՒՄ
Բարեփոխվում են առանցքային ուղղությունները **20**

Հարկատու
ԼՂՀ ՀԱՐԿԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ
№ 1(7) 2012










# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

**tax ՊԱՇՏՈՆԱԿԱՆ** 6

6 **Պետբյուջեի մուտքերն աճել են շուրջ 9 անգամ**
Ամբողջությամբ կատարվել են սոցիալական բոլոր վճարումները

**tax ԼՈՒՐԵՐ** 10

10 **Կադրային ներուժը նորացվում է**
ՀԾ-ն աշխատողների մրցույթ և ատեստավորում է անցկացնում

**tax ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ** 12

12 **Տարվա գերակատարումները**
Հարկային եկամուտներն աճել են 10.2%-ով

**tax ՕՐԵՆՔ** 16

16 **Նոր քայլեր՝ բիզնեսը խթանելու և կարգազանցությունը կանխելու համար**
ԼՂՀ օրենքները 2011-ին վերանայվել են

**tax top** 20

20 **Համակարգի արդիականացումից մինչև հանրային իրազեկում**
Բարեփոխվում են առանցքային 4 ուղղությունները

**tax ՌԵՊՈՐՏԱԺ** 24

24 **Բացատրական աշխատանք, հասցեական հսկողություն**
Այս սկզբունքով է գործում Ստեփանակերտի հարկային տեսչությունը

**tax ՀԱՐԿԱՏՈՒՆԵՐ** 28

28 **100 խոշորներն ապահովել են պետբյուջեի մուտքերի 62.4%-ը**
Իրացման ծավալներն աճել են

ԼՂՀ ՀԱՐԿԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ

№ 1(7) 2012













# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

**tax ՈԼՈՐՏ** 34

34 **Ձվի արտադրությունից մինչև թռչնաբուծություն**
«Դվին»-ի 10 տարվա կենսագրությունն է

**tax NON ստանդարտ** 36

36 **Թռչնաբուծության նոր տեսակ՝ Արցախում**
Ջայլամաբուծությունը լավ հեռանկար է խոստանում

**tax ԲԻԶՆԵՍ** 40

40 **ԼՂՀ հանքարդյունաբերությունը 10 տարեկան է**
«Բեյզ Մեթըլս»՝ Արցախի ընդերքի գիտակ

44 **Հեռահաղորդակցության նոր որակ 10 տարիների ընթացքում**
«Ղարաբաղ Տելեկոմ»՝ կամուրջ Արցախի և ողջ աշխարհի միջև

46 **Երկնագույն վառելիքի պահանջարկն ավելանում է**
«Արցախգազ»-ի համար առաջնայինն անվտանգ գազամատակարարումն է

48 **Էլեկրաէներգիայի պահանջարկն ավելանում է**
«Արցախէներգո»-ն էլեկտրաֆիկացրել է նոր բնակավայրեր

50 **15 տարի՝ Արցախում և Արցախի կողքին**
«Արցախբանկ»-ը քայլում է հասարակության պահանջներին ընդառաջ

**tax ԱՇԽԱՐՀ** 54

54 **Կոկորդիլոսաբուծություն՝ անասնաբուծության տեսակ և զբոսաշրջային բիզնես**

# ԹԵԺ ԳԻԾ

## Վստահություն
## Հրատապություն
## Հետևողականություն

## (+374 47) 974-758

Հարկատու

ԼՂՀ ԿԱ ՀԱՐԿԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ

ԹԻՎ 1(7) 2012

Գլխավոր խմբագիր՝
Նելլի Մանուչարյան

Հեղինակներ՝
Գայանե Ավագյան
Արմինե Մուսայելյան
Նորայր Հովսեփյան

Արտ խումբ՝
Գևորգ Գաբրիելյան
Նելլի Բարսեղյան
Նաիրա Պետրոսյան

Գովազդ և մարկետինգ՝
Հեռ.՝ 94 86 20

Հրատարակության 3-րդ տարի
Ծավալը՝ 56 էջ
Տպաքանակը՝ 2000

Տրված է տպագրության
16.05.12

Հեռ.՝ 94-86-20
Էլ. փոստ՝ info@taxservice.nk.am

Մեջբերումներ անելիս հղումը
«Հարկատու» ամսագրին
պարտադիր է:

Ամսագրի հոդվածների մասնակի կամ
ամբողջական հեռուստառադիոընթերցումն
առանց «Հարկատու» ամսագրին
վկայակոչելու արգելվում է:

Ամսագիրը տպագրվում է
«Տիգրան Մեծ» տպագրատանը

**-Պարոն Թևոսյան, ինչպիսի՞ն էր ԼՂՀ պետական բյուջեն 2011 թվականին:**

-Ուրախությամբ կարող եմ նշել, որ կառավարությանը հաջողվել է կատարել 2011 թվականի բյուջեի ծրագիրը թե՛ եկամուտների և թե՛ ծախսերի առումով: Բյուջեի սեփական եկամուտներն ապահովվել են ծրագրված չափերին համապատասխան և կազմել 25,756.4մլն նանսավորվել են նաև նախատեսված ծրագրերի համաձայն ներկայացված և հիմնավոր ճանաչված բոլոր հայտերը: Կարող ենք վստահ ասել՝ 2011-ի պետբյուջեն լիովին արտահայտում է կառավարության որդեգրած սոցիալ-տնտեսական քաղաքականությունը:

**-Որո՞նք էին պետբյուջեի ծախսերի առաջնահերթ ուղղությունները 2011-ին:**

Աջակցում ենք նաև փոքր և միջին ձեռնարկատիրություններին և այդ նպատակով 2011-ին հատկացրել ենք 2մլրդ դրամ: Կարևորելով ՓՄՁ-ի դերը երկրի տնտեսական զարգացման, բնակչության կենսամակարդակի բարձրացման, հասարակության միջին խավի ձևավորման գործում՝ ԼՂՀ կառավարությունը անընդհատ ավելացնում է դրանց տրվող աջակցության ծավալներն ու

# ՊԵՏԲՅՈՒՋԵԻ ՄՈՒՏՔԵՐՆ ԱՃԵԼ ԵՆ ՇՈՒՐՋ 9 ԱՆԳԱՄ

## Ամբողջությամբ կատարվել են սոցիալական բոլոր վճարումները

**2011 թվականը քսան տարեկան դարձած հանրապետության համար հատկանշական էր նաև բյուջեի ծրագրի լիարժեք իրականացմամբ: Ավելին, գերակատարվել են տարբեր ուղղություններով ծրագրված ցուցանիշները: Այս ամենի շնորհիվ կառավարությունը կատարել է սոցիալական բոլոր վճարումները՝ մի քանի տոկոսով ավելացնելով դրանց չափը: Այդ տարի կառավարության ուշադրության կենտրոնում է եղել գյուղատնտեսության ոլորտը, կատարվել են կապիտալ ներդրումներ և աջակցություն է ցուցաբերվել ՓՄՁ-ին: 2012-ին կառավարությունը մի քանի հաճելի նորույթներ է խոստանում բնակչությանը:**

դրամ՝ գերազանցելով նախորդ տարվա մակարդակը 8,2%-ով: Հարկային եկամուտների և պետական տուրքի գծով փաստացի մուտքերը նախորդ տարվա համեմատ աճել են ավելի քան 10%-ով: Պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով ծրագրված ցուցանիշը գերակատարվել է շուրջ 3%-ով: Նախորդ տարվա համեմատ սոցվճարների գծով մուտքերն աճել են 9,5%-ով, իսկ այլ եկամուտների գծով՝ մոտ 12%-ով: Այսպիսի մուտքերը հնարավորություն տվեցին ամբողջությամբ կատարել բյուջեով նախատեսված սոցիալական բոլոր վճարումները՝ կենսաթոշակները, նպաստները, աշխատավարձերը, որոնք կառավարությունը դիտում է որպես առաջնահերթ ծախսատեսակներ: Ամբողջությամբ ֆի-

-Կառավարությունը շարունակում է դիտել գյուղատնտեսությունը որպես գերակա ուղղություն: Այդ է վկայում

**Ծրագրերի հիմնական նպատակն է բնակչության սոցիալապես ամենախոցելի խավերին արտաքին անբարենպաստ ազդեցություններից պաշտպանելը: Կառավարությունը գործադրելու է բոլոր ջանքերը, որպեսզի նախատեսված չափով և առանց ուշացման կատարի սոցիալական բոլոր վճարումները**

այն, որ վերջին հինգ տարիների ընթացքում այս ոլորտին ուղղվող ծախսերի մասնաբաժինը պետական բյուջեի ծախսերում աճել է մոտ վեց անգամ: կատարելագործում տրամադրման մեխանիզմները: Այս ծրագրի իրականացման նպատակով 2008-ից ի վեր պետբյուջեից ֆինանսական միջոցներ է ստանում «Արցախի ներդրումային հիմնադրամ»-ը: Բյուջեի միջոցների հաշվին իրականացվում են նաև կապիտալ ներդրումներ: 2011-ին դրանք եղել են 18մլրդ դրամի և ուղղվել են տնտեսության ճյուղերի զարգացմանն ու սոցիալական նշանակություն ունեցող շինարարական ծրագրերի իրականացմանը:

**-Սոցիալական ոլորտը 2011-ին և՞ս եղել է ուշադրության կենտրոնում:**

-Սա ամենացավոտ խնդիրն է բոլոր պետությունների համար, բայց մեզ համար՝ որպես պատերազմ ապրած երկրի, այն



***ԼՂՀ փոխվարչապետ, ֆինանսների նախարար Սպարտակ Թևոսյան.***
*«Հարկային վարչարարության բարելավման ոլորտում իրականացված արդյունավետ աշխատանքները տնտեսական զարգացման հետ մեկտեղ հնարավորություն տվեցին ոչ միայն ապահովելու պլանավորված մակարդակը, այլև գերակատարելու այն միջինում 2%-ով»*

առանձնահատուկ կարևորություն է ներկայացնում: Ինչպես նախորդ տարիներին, այս անգամ էլ բյուջետային ծախսերի մոտ 60%-ն ուղղված է եղել սոցիալական պաշտպանության, առողջապահության, կրթության և գիտության, մշակույթի և այլ ոլորտների ֆինանսավորմանը: Բարձրացել է նվազագույն աշխատավարձը՝ դառնալով 32500 դրամ՝ 2010 թվականի 30000 դրամի փոխարեն: Ավելացել են նաև առողջապահության համակարգի, հանրակրթական դպրոցների ուսումնաօժանդակ և տնտեսական անձնակազմի, մշակույթի բնագավառի աշխատողների աշխատավարձերը: Կենսաթոշակներն էլ վճարվել են 2010-ի նոյեմբերի 1-ից բարձրացված չափերով:

**-Անկախության առաջին տարիների և 2011-ի պետական բյուջեն համեմատելով՝ դինամիկան ինչպիսի՞ն է:**

-Հետպատերազմյան խորն անկումից հետո Արցախը թևակոխել է շուկայական բարեփոխումների փուլ: 1996 թվականի համեմատ հանրապետության համախառն ներքին արդյունքն իրական արտահայտությամբ աճել է ավելի քան 4 անգամ, համախառն ներքին արդյունքի ցուցանիշը 1 շնչի հաշվով՝ ավելի քան 2, ամսական միջին աշխատավարձը՝ ավելի քան 6 անգամ: Նշված ժամանակահատվածում տա-

www.tax.nk.am ■ թեժ գիծ (+374 47) 974-758

**Կառավարությանը հաջողվել է կատարել 2011 թվականի բյուջեի ծրագիրը թե՛ եկամուտների և թե՛ ծախսերի առումով: Բյուջեի սեփական եկամուտներն ապահովվել են ծրագրված չափերին համապատասխան և կազմել 25,756.4մլն դրամ՝ գերազանցելով նախորդ տարվա մակարդակը 8,2%-ով: Հարկային եկամուտների և պետական տուրքի գծով փաստացի մուտքերը նախորդ տարվա համեմատ աճել են ավելի քան 10%-ով: Պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով ծրագրված ցուցանիշը գերակատարվել է շուրջ 3%-ով**

րեկան միջին տնտեսական աճը(9,9%) տարածաշրջանի մասշտաբով (Հայաստան, Վրաստան, Թուրքիա, Իրան, Ադրբեջան, Ռուսաստան) առավել բարձր ցուցանիշներից էր, իսկ ֆինանսատնտեսական ճգնաժամի տարիներին (2008-2009թթ.) նույնիսկ ամենաբարձրն էր: Աճել են նյութական արտադրության ճյուղերի ծավալները, նվազել է գործազրկության մակարդակը՝ 8,5%-ից դառնալով 5,6%: Թվերը ցույց են տալիս, որ պետության ֆինանսական ռեսուրսներն աճել են ընդհանուր տնտեսության զարգացմանը համահունչ: Շուրջ 9 անգամ աճել են պետբյուջեի մուտքերը(1996-ին՝ 7,121.7մլն դրամ, 2011-ին՝ 60,975.5մլն դրամ): Ընդ որում, դրանց կառուցվածքում տարեցտարի ավելանում է պետբյուջեի սեփական եկամուտների մասնաբաժինը: Եթե 1996 թվականին 33%-ից փոքր-ինչ ավելի էր, ապա 2011-ին 42% էր:

**-Պարոն Թևոսյան, որքանո՞վ է հաջողվում ապահովել հարկային մուտքերի պլանավորված մակարդակը:**

-Հարկային վարչարարության բարելավման ոլորտում իրականացված արդյունավետ աշխատանքները տնտեսական զարգացման հետ մեկտեղ հնարավորություն տվեցին ոչ միայն ապահովելու պլանավորված մակարդակը, այլև գերակատարելու այն միջինում 2%-ով(2007-2011 թվականների հաշվարկով): 2011-ին պետբյուջեի սեփական եկամուտների ավելի քան 90%-ը կազմել են հարկային եկամուտների և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով մուտքերը: Ընդ որում, հաշվի առնելով մեր հանրապետության առանձնահատուկ դիրքը և մաքսային սահմանի բացակայությունը՝ եկամուտները հավաքագրվում են բացառապես ներքին շրջանառությունից:

**-Ի՞նչ համամասնությամբ են բաշխվում հարկային մուտքերը խոշոր և փոքր ու միջին հարկատուների միջև: Արդյո՞ք այդ բաշխումը համահունչ է եկամուտների բաշխմանը:**



-Ի տարբերություն հարկային դրույքաչափերի պրոգրեսիվ համակարգ ունեցող մի շարք երկրների՝ ԼՂՀ-ում գործում է հարկային դրույքաչափերի համամասնական համակարգ, որի դեպքում հարկերի դրույքաչափերը կախված չեն եկամուտների մակարդակից: Այսինքն՝ հարկային բեռը տնտեսվարող սուբյեկտների միջև բաշխվում է իրենց կողմից ստացվող եկամուտներին համապատասխան: Այսպիսի քաղաքականությունը ստեղծում է արդարացի և բարենպաստ պայմաններ առաջին հերթին խոշոր, այդ թվում՝ օտարերկրյա ներդրումների ներգրավման համար, ինչը կարևոր է մեր հանրապետության տնտեսական զարգացման այս փուլում: Նշեմ, որ 2011-ին խոշոր հարկատուների կատարած հարկային վճարումներն ապահովել են հարկային ընդհանուր մուտքերի ավելի քան 65%-ը, ինչը համարժեք է համախառն ներքին արդյունքում նրանց ներդրման ծավալներին:

**-Ինչպիսի՞ն է պետական բյուջեն 2012-ին, երբ կանխատեսում են ճգնաժամի նոր ալիք:**

-Այս տարվա պետբյուջեի ծախսերը կազմում են 70,320մլն դրամ՝ 2011 թվականի փաստացի կատարված 67,377մլն դրամի դիմաց, այսինքն՝ աճը կազմում է ընդամենը 4,4%: Այնուամենայնիվ, գիտակցելով համաշխարհային տնտեսության հնարավոր նոր մարտահրավերները և շնորհիվ պետական բյուջեի ավելի արդյունավետ ներքին կառուցվածքի՝ մենք այս տարի ապահովել ենք կենսաթոշակների բարձրացում՝ ավելի քան 11%-ի չափով, պետական հաստատություններում խնամվող երեխաների և տարեցների սննդի ծախսերի բարձրացում՝ 15%-ի չափով: 10%-ով բարձրացվել են առողջապահության համակարգի աշխատողների աշխատավարձերը, 50%-ով՝ գյուղատնտեսության ոլորտի: Առաջին անգամ պետական ծառայողներին ապահովելու ենք սոցիալական փաթեթով: Այս բոլոր ծրագրերի հիմնական նպատակն է բնակչության սոցիալապես ամենախոցելի խավերին որոշ չափով արտաքին անբարենպաստ ազդեցություններից պաշտպանելը: Դրա հետ մեկտեղ, կառավարությունը գործադրելու է բոլոր ջանքերը, որպեսզի նախատեսված չափով և առանց ուշացման կատարի սոցիալական բոլոր վճարումները:

# ՀԻՇԵՔ ՀԱՐԿԱՅԻՆԸ

# ՀԱՏԿԱՊԵՍ

# ԱՅՍ ՕՐԵՐԻՆ

## Ապրիլ

| I | II | III | IV | V | VI | VII |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | 1 |
| 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
| 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 |
| **16** | 17 | 18 | 19 | **20** | 21 | 22 |
| 23 / **30** | 24 | **25** | 26 | 27 | 28 | 29 |

բոլոր մանրամասներն այստեղ՝

**www.tax.nk.am**

# ԿԱԴՐԱՅԻՆ ՆԵՐՈՒԺԸ ՆՈՐԱՑՎՈՒՄ Է

## ՀԾ-ն աշխատողների մրցույթ և ատեստավորում է անցկացնում

**2009 ից հարկային ծառայությունը կիրառում է ատեստավորման և մրցույթների կազմակերպման էլեկտրոնային համակարգ: Դրանով բացառվում է կազմակերպման ժամանակ որևէ անարդարություն: Այս միջոցով ծառայությունը կարողանում է ճիշտ ընտրել կադրերին և կազմակերպել նրանց մասնագիտական առաջխաղացումը:**

### ՆՈՐ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄՆԵՐ՝ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ՇՆՈՐՀԻՎ

Հարկային ծառայությունը «Բ», «Գ» և «Դ» խմբերի պաշտոններ զբաղեցնող հարկային ծառայողների համար 2011 թվականի նոյեմբերի 29-ին ատեստավորում է կազմակերպել՝ «Հարկային ծառայության մասին» ԼՂՀ օրենքի 20-րդ հոդվածի պահանջների համաձայն: Ատեստավորման արդյունքերը ցույց են տվել, որ 35 ծառայողներից 14-ը համապատասխանել են զբաղեցրած պաշտոններին, ևս 14-ը՝ միայն վերապատրաստում անցնելու և դրական գնահատական ստանալու պայմանով, իսկ 7 ծառայողներ չեն համապատասխանել զբաղեցրած պաշտոններին:

### ՄՐՑՈՒՅԹ՝ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Հարկային ծառայության «Բ», «Գ» և «Դ» խմբերի թափուր պաշտոն զբաղեցնելու համար՝ 2011-ի նոյեմբերի 10-ին հարկային պետական ծառայությունը հերթական մրցույթներն է անցկացրել: 24 թափուր հաստիքներից 20-ի համար հայտարարվել էր բաց, 4-ի համար՝ փակ մրցույթ: Մասնակցում էին 32 դիմորդներ, ընդ որում, 30-ը՝ բաց մրցույթում, 2-ը՝ փակ: Քննության առաջին փուլը՝ գրավոր, հաղթահարեցին 4 դիմորդներ՝ ձեռք բերելով իրավունք՝ նույն օրը մասնակցելու հարցազրույցին: Մրցութային և ատեստավորման հանձնաժողովը 4 մասնակիցներին էլ հաղթող ճանաչեց:



**Հարկային ծառայությունը ոչ միայն դռներն է բացում նոր աշխատողների առջև, այլև հոգում է իր կադրերի մասնագիտական առաջխաղացման մասին: 59 աշխատակիցներ, որոնք իրականացնում են հարկ վճարողների սպասարկման, վերահսկողության և գանձման գործառույթներ, վերապատրաստման դասընթացներ են անցել հոկտեմբերի 14-ից նոյեմբերի 19-ը**

Ատեստավորման արդյունքերը ցույց են տվել, որ 35 ծառայողներից 14-ը համապատասխանել են զբաղեցրած պաշտոններին, իսկ 14-ը՝ միայն վերապատրաստում անցնելու և դրական գնահատական ստանալու պայմանով, իսկ 7 ծառայողներ չեն համապատասխանել զբաղեցրած պաշտոններին:

24 թափուր հաստիքներից 20-ի համար հայտարարվել էր բաց, 4-ի համար՝ փակ մրցույթ: Մասնակցում էին 32 դիմորդներ, ընդ որում, 30-ը՝ բաց մրցույթում, 2-ը՝ փակ: Քննության առաջին փուլը՝ գրավոր, հաղթահարեցին 4 դիմորդներ՝ ձեռք բերելով իրավունք՝ նույն օրը մասնակցելու հարցազրույցին: Մրցութային և ատեստավորման հանձնաժողովը 4 մասնակիցներին էլ հաղթող ճանաչեց



Նոյեմբերի 15-ին երկրորդ անգամ բաց մրցույթ կազմակերպվեց՝ հարկային ծառայության «Դ» խմբի թափուր պաշտոնները զբաղեցնելու համար: Մասնակցում էին թափուր 17 պաշտոններին հավակնող տասնինը դիմորդներ, որոնք հավաքել էին 50 և ավելի տոկոս: Մրցույթի երկու փուլերի արդյունքներով հաղթող են ճանաչվել 3 մասնակիցներ:

## ՊԱՅՄԱՆՆԵՐ՝ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԱՌԱՋԽԱՂԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ

Հարկային ծառայությունը ոչ միայն դռներն է բացում նոր աշխատողների առջև, այլև հոգում է իր կադրերի մասնագիտական առաջխաղացման մասին: 59 աշխատակիցներ, որոնք իրականացնում են հարկ վճարողների սպասարկման, վերահսկողության և գանձման գործառույթներ, վերապատրաստման դասընթացներ են անցել հոկտեմբերի 14-ից նոյեմբերի 19-ը: Դասընթացների թեմաներն էին՝

- հաշվապահական հաշվառման ստանդարտներ, հաշվապահական ձևակերպումներ, հաշվապահական հաշվեկշռի և ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության լրացման կարգ,
- հարկային հաշվարկ-հաշվետվությունների լրացման և կամերալ ուսումնասիրությունների անցկացման կարգ,
- ստուգումների և ուսումնասիրությունների կազմակերպում և անցկացում:



**Նոյեմբերի 15-ին երկրորդ անգամ բաց մրցույթ կազմակերպվեց՝ հարկային ծառայության «Դ» խմբի թափուր պաշտոնները զբաղեցնելու համար: Մասնակցում էին թափուր 17 պաշտոններին հավակնող տասնինը դիմորդներ, որոնք հավաքել էին 50 և ավելի տոկոս: Մրցույթի երկու փուլերի արդյունքներով հաղթող են ճանաչվել 3 մասնակիցներ**

Դասընթացների յուրացման աստիճանը գնահատելու նպատակով՝ դրանց ավարտից հետո աշխատակիցները թեստային տարբերակով ստուգարք են հանձնել: Դրական գնահատական են ստացել հարկային 6 ծառայողներ: Այսինքն՝ հաղթահարել են թեստի առնվազն 60%-ը, այդ թվում՝ յուրաքանչյուր բնագավառից առնվազն 50%:

ԼՂՀ պետական բյուջեի հարկային եկամուտները 2011 թվականին կազմել են շուրջ 16659806.1հազ. դրամ՝ 1.8%-ով ծրագրային մուտքերից ավելի: 2010 թվականի համեմատ պետական բյուջեի հարկային եկամուտներն աճել են 1537090.9հազ. դրամով կամ 10.2%-ով: Հարկային եկամուտների հաշվին է ապահովվել պետական բյուջեի եկամուտների 65.5%-ը: Գերակատարվել են պետական բյուջեի հարկային եկամուտների բոլոր եկամտատեսակների պլանային առաջադրանքները:

**Պետական տուրքի գծով 2011 թվականին բյուջեի մուտքերը կազմել են 438070.9հազ. դրամ՝ ապահովելով պետբյուջեի եկամուտների 1.6%-ը: Պլանավորված ցուցանիշը գերակատարվել է 58070.9հազ. դրամով կամ 15.3%-ով**

2011 թվականին ավելացված արժեքի հարկի գծով պետական բյուջեի մուտքերը կազմել են 8955533.1հազ. դրամ՝ ապահովելով հարկային եկամուտների 53.8%-ը և ընդհանուր բյուջետային եկամուտների 35.2%-ը. Նախատեսված ցուցանիշը կատարվել է 100.1%-ով: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ԱԱՀ-ի գծով ԼՂՀ պետական բյուջեի մուտքերն աճել են 548872.8հազ. դրամով կամ 6.5%-ով: Աճը հիմնականում պայմանավորված է էներգետիկայի, գազի և կապի ոլորտներում գործող տնտեսվարող սուբյեկտների հայտարարագրած հարկվող ծավալների աճով և 2011-ի հունվարի 1-ից բենզինի վաճառքի գործունեությունը հաստատագրված վճարով հարկման կարգից ընդհանուր հարկման կարգին անցնելու հետ:

Պետական բյուջեի հարկային եկամուտների կազմում ԱԱՀ-ից հետո իր կշռով երկրորդ հարկատեսակը եկամտահարկն է: Հաշվետու ժամանակահատվածում ապահովվել են 2180909.2 հազ. դրամի մուտքեր՝ կազմելով պետական բյուջեի հարկային եկամուտների 13.1%-ը և ընդհանուր եկամուտների 8.6%-ը, պլանավորված ցուցանիշը գերակատարվել է 75909.2 հազ. դրամով կամ 3.6%-ով: 2010-ի համեմատ եկամտահարկի գծով պետական բյուջեի մուտքերն աճել են 8.7%-ով կամ 175255հազ. դրամով: Եկամտահարկի գծով պետական բյուջեի մուտքերի ավելացումը պայմանավորված է վերահսկողական աշխատանքների իրականացման հետևանքով ստվերի կրճատման արդյունքում որոշ ոլորտներում հայտարարագրվող միջին աշխատավարձերի, ինչպես նաև նվազագույն աշխատավարձի բարձրացմամբ:

2011 թվականին շահութահարկի գծով պետբյուջեի եկամուտները կազմել են 1570568.6հազ. դրամ՝ ապահովելով



հարկային եկամուտների 9.4%-ը և ընդհանուր եկամուտների 6.2%-ը. պլանավորված ցուցանիշը գերակատարվել է 1%-ով կամ 15568.6հազ. դրամով: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ շահութահարկի մուտքերը ավելացել են 291386.2հազ. դրամով կամ 22.8%-ով: Աճը պայմանավորված է հանքարդյունահանման, բանկային, կապի և շինարարության ոլորտներում գործող հարկ վճարողներից հարկվող շահույթի աճով:

Պետական բյուջեի հարկային եկամուտների կազմում ակցիզային հարկի հաշվին ապահովվել են 270928.7հազ. դրամի մուտքեր՝ կազմելով պետական բյու-

են 71231.5հազ. դրամով կամ 13.5%-ով, ինչը պայմանավորված է հաստատագրված վճարներով հարկվող որոշ ոլորտների՝ առևտրի իրականացման վայրի կազմակերպման, բենզինի և դիզելային վառելիքի վաճառքի գործունեությունների՝ 2011 թվականի հունվարի 1-ից հաստատագրված վճարով հարկման կարգից ընդհանուր հարկման համակարգին անցնելու հետ:

2011 թվականին պետական բյուջե մուտքագրված հարկային եկամուտների 9.1%-ը և ընդհանուր բյուջետային եկամուտների 6%-ն ապահովվել է առևտրի հարկի հաշվին: Այս հարկատեսակի գծով մուտքերը կազմել են

նին պետական բյուջե է մուտքագրվել 617638.7 հազ. դրամ, պլանավորված ցուցանիշը գերակատարվել է 0.4%-ով: 2010-ի համեմատ վճարի գծով պետական բյուջեի մուտքերն աճել են 109746.6հազ. դրամի չափով կամ 21.6%-ով, ինչը հիմնականում պայմանավորված է միջազգային շուկայում հանքարդյունաբերական արտադրանքի գնի և արդյունահանվող արտադրանքի ծավալի աճի հետ:

Ավտոմոբիլային ճանապարհների շինարարության, նորոգման և պահպանման համար կատարվող մասհանումների մուտքերը հաշվետու ժամանակահատվածում կազմել են

# ՀԱՐԿԱՅԻՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՆ ԱՃԵԼ ԵՆ 10.2%-ՈՎ

ջեի հարկային եկամուտների 1.6%-ը և ընդհանուր բյուջետային եկամուտների 1.1%-ը: Պլանավորված ցուցանիշը գերակատարվել է 828.7հազ. դրամով կամ 0.3%-ով, իսկ նախորդ տարվա մակարդակը՝ 21.9%-ով կամ 48752.8հազ. դրամով: Ակցիզային հարկի մուտքերի աճը պայմանավորված է ակցիզային հարկ վճարողների կողմից հայտարարագրված իրացման ծավալների աճով:

Հաշվետու ժամանակաշրջանում պետական բյուջե մուտքագրված հաստատագրված վճարների գումարը կազմել է 454624.3հազ. դրամ՝ ապահովելով պետական բյուջեի հարկային եկամուտների 2.7%-ը: Պլանավորված ցուցանիշը գերակատարվել է 2%-ով կամ 9124.3հազ. դրամով: Նախորդ տարվա համեմատ հաստատագրված վճարների գծով մուտքերը նվազել

1518633.3հազ. դրամ՝ 12.7%-ով կամ 170722հազ. դրամով գերազանցելով նախորդ տարվա ցուցանիշը, 8.9%-ով կամ 123633.3հազ. դրամով՝ հաշվետու ժամանակաշրջանի պլանավորված ցուցանիշը: Աճը հիմնականում պայմանավորված է հարկային մարմնի կողմից առևտրի ոլորտում իրականացվող վարչարարական աշխատանքների արդյունքում հայտարարագրվող ծավալների ավելացմամբ:

Բնապահպանական և բնօգտագործման վճարների գծով 2011 թվական-



**Եկամտահարկի գծով մուտքերի ավելացումը պայմանավորված է վերահսկողական աշխատանքների իրականացման հետևանքով ստվերի կրճատման արդյունքում հայտարարագրվող միջին աշխատավարձերի, ինչպես նաև նվազագույն աշխատավարձի բարձրացմամբ**

**Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ԱԱՀ-ի գծով մուտքերն աճել են 548872.8հազ. դրամով կամ 6.5%-ով: Աճը հիմնականում պայմանավորված է էներգետիկայի, գազի և կապի ոլորտներում հայտարարագրված հարկվող ծավալների աճով**

www.tax.nk.am ■ թեժ գիծ (+374 47) 974-758

575740հազ. դրամ, նախատեսված ցուցանիշը 35540հազ. դրամով կամ 6.6%-ով ավելի է կատարվել: Նախորդ տարվա համեմատ մասհանումների գծով մուտքերն աճել են 17.6%-ով կամ 86094.2հազ. դրամով: Աճը գլխավորապես պայմանավորված է հարկ վճարողների կողմից հայտարարագրվող իրացման ծավալների աճով, մասնավորապես՝ հանքարդյունահանման, ֆինանսավարկային և այլ բնագավառներում:



Հարկային այլ եկամուտների գծով 2011 թվականին մուտքերը կազմել են 84711.1հազ. դրամ, որը ծրագրված ցուցանիշը գերազանցել է 9711.1հազ. դրամով կամ 12.9%-ով: Նախորդ տարվա համեմատ հարկային այլ եկամուտների գծով մուտքերը նվազել են 20%-ով կամ 21164.8հազ. դրամով: Նվազումը պայմանավորված է ռիսկային չափանիշների հիման վրա ստուգումների և կանխարգելիչ միջոցառումների իրականացման հետ:

Ռոյալթիի գծով 2011 թվականին պետբյուջեի եկամուտները կազմել են 368470.7հազ. դրամ. ծրագրված ցուցանիշը կատարվել է 102.7%-ով կամ ավելի է 9816հազ. դրամով: Նախորդ տարվա համեմատ ռոյալթիի գծով մուտքերը աճել են 96.5%-ով, ինչը կապված է հանքարդյունահանման ոլորտում շահութաբերության նորմայի աճի հետ:

Հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարների գծով ԼՂՀ պետական բյուջեի եկամուտները 2011 թվականին կազմել են 62048.5հազ. դրամ կամ ծրագրված ցուցանիշը գերակատարվել է 1.1%-ով, իսկ նախորդ տարվա համեմատ հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարների գծով մուտքերն աճել են 39.8%-ով:

**Պետական բյուջեի հարկային եկամուտները 2011 թվականին կազմել են շուրջ 16659806.1հազ. դրամ՝ 1.8%-ով ծրագրային մուտքերից ավելի: 2010 թվականի համեմատ պետական բյուջեի հարկային եկամուտներն աճել են 1537090.9հազ. դրամով կամ 10.2%-ով: Հարկային եկամուտների հաշվին է ապահովվել պետական բյուջեի եկամուտների 65.5%-ը: Գերակատարվել են պետական բյուջեի հարկային եկամուտների բոլոր եկամտատեսակների պլանային առաջադրանքները**

## ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔ

Պետական տուրքի գծով 2011 թվականին բյուջեի մուտքերը կազմել են 438070.9հազ. դրամ՝ ապահովելով պետբյուջեի եկամուտների 1.6%-ը: Պլանավորված ցուցանիշը գերակատարվել է 58070.9հազ. դրամով կամ 15.3%-ով: 2010թ. համեմատ պետական տուրքի գծով պետական բյուջեի մուտքերն աճել են 20.5%-ով կամ 74456հազ. դրամով:

## ՊԱՐՏԱԴԻՐ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ՎՃԱՐՆԵՐ

Պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով ԼՂՀ պետական բյուջեի՝ 2011 թվականի մուտքերը կազմել են 6675952հազ. դրամ(այդ թվում՝ ծախսերի՝ 2011-ի չափը՝ 503721.6հազ. դրամ) կամ պլանավորված ցուցանիշը կատարվել է 102.6%-ով և ավելի է 171952հազ. դրամով: Նախորդ տարվա համեմատ վճարի գծով մուտքերն աճել են 9.5%-ով կամ 577795հազ. դրամով: Աճը հիմնականում կապված է հաշվետու ժամանակաշրջանում հարկային մարմնի կողմից իրականացվող վարչարարական աշխատանքների արդյունքում հարկ վճարողների կողմից հայտարարագրվող միջին աշխատավարձի աճի և նվազագույն աշխատավարձի բարձրացման հետ, ինչպես նաև անհատ ձեռնարկատերերի կողմից հայտարարագրվող պարտադիր սոցիալական ապահովության վճարներով հարկվող տարեկան եկամուտների աճի հետ:

**2011 թվականին շահութահարկի գծով պետբյուջեի եկամուտները կազմել են 1570568.6հազ. դրամ՝ ապահովելով հարկային եկամուտների 9.4%-ը և ընդհանուր եկամուտների 6.2%-ը**



## ՀԻՇԵՔ ՀԱՐԿԱՅԻՆԸ

# ՀԱՏԿԱՊԵՍ

## ԱՅՍ ՕՐԵՐԻՆ

### Մայիս

| I | II | III | IV | V | VI | VII |
|---|---|---|---|---|---|---|
| | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 |
| 14 | 15 | 16 | 17 | 18 | 19 | 20 |
| 21 | 22 | 23 | 24 | 25 | 26 | 27 |
| 28 | 29 | 30 | 31 | | | |

բոլոր մանրամասներն այստեղ՝

**www.tax.nk.am**

# ՆՈՐ ՔԱՅԼԵՐ՝ ԲԻԶՆԵՍԸ ԽԹԱՆԵԼՈՒ ԵՎ ԿԱՐԳԱԶԱՆՑՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՆԽԵԼՈՒ ՀԱՄԱՐ

## ԼՂՀ օրենքները 2011-ին վերանայվել են

**Բիզնեսն արդյունավետ կազմակերպելու նոր հնարավորություններ են ստեղծվել հարկատուների համար, իսկ օրենքը շրջանցելու հավանականությունը նվազել է: Այդ են վկայում հարկային դաշտը կատարելագործելու համար նախորդ տարի ընդունված նոր օրենքները: Բարեփոխումներն ուղղված են ինչպես օրենսդրական հակասությունների վերացմանը, այնպես էլ բազմաթիվ գործընթացների համակարգմանը:**

### ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐԵՐԻ ՀԱՐԿԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՆՎԱԶՈՒՄ ԵՆ

Մինչև 7200.0հազ. դրամ շրջանառություն ունեցող անհատ ձեռնարկատերերերի հարկային պարտավորությունը հաշվետու տարում լինելու է միայն արտոնագրային և համապատասխան պարտադիր սոցիալական ապահովության նվազագույն(5000դր) վճարներ կատարելը: Այդ հնարավորությունը տալիս է «Արտոնագրային վճարների մասին» ԼՂՀ օրենքը: Վերջինով նաև անձնական բնույթի ծառայությունների մատուցմամբ զբաղված ֆիզիկական անձանց, սկսած 2013 թվականի հունվարի 1-ից, հնարավորություն է ընձեռվում հաշվառվելու հարկային մարմնում և ձեռք բերելու օրինական կարգավիճակ՝ կատարելով արտոնագրային վճարներ և պարտադիր սոցիալական ապահովության նվազագույն վճարներ: Մինչ օրենքի գործելը մանր արտադրությամբ և ծառայությունների մատուցմամբ զբաղված անհատ ձեռնարկատերերը վարում էին նույն բարդությամբ հարկային հաշվառում և ներկայացնում նույն հաշվարկ-հաշվետվությունները, ինչ մյուս կազմակերպությունները: Դրա հետևանքով վերջիններս հաշվառումը սխալներով էին վարում և հարկային մարմինների կողմից պատասխանատվության ենթարկվում: Այս խնդրի պատճառով անձնական բնույթի ծառայությունների մատուցմամբ զբաղված ֆիզիկական անձինք հաճախ չէին ստանում պետական գրանցում: Արդյունքում՝ ստանալով եկամուտ հարկեր չէին վճարում և գործող հարկային օրենսդրությամբ համարվում էին ապօրինի ձեռնարկատիրական գործունեություն իրականացնողներ:

> **Անձնական բնույթի ծառայությունների մատուցմամբ զբաղված ֆիզիկական անձանց, սկսած 2013 թվականի հունվարի 1-ից, հնարավորություն է ընձեռվում հաշվառվելու հարկային մարմնում և ձեռք բերելու օրինական կարգավիճակ՝ կատարելով արտոնագրային վճարներ և պարտադիր սոցիալական ապահովության նվազագույն վճարներ**



### ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԻՆՔ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԿԿԱՆԳՆԵՆ ԿԱՄԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՈՎ

«Կազմակերպություններին և ֆիզիկական անձանց հարկային հաշվառման վերցնելու և հարկային հաշվառումից հանելու մասին» օրենքով կարգավորվել են հարկ վճարողի հաշվառման համար տրամադրելու, կազմակերպութ-

յունների և ֆիզիկական անձանց հարկային հաշվառման միասնական ռեեստրի վարման, ինչպես նաև հաշվառումից դուրս գալու հետ կապված հարաբերությունները: Սահմանվել են նաև անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձանց հարկային հաշվառման(հարկ վճարողի հաշվառման համարի տրամադրման) վերաբերյալ դրույթները, որոնց համաձայն՝ ֆիզիկական անձինք կարող են հաշվառման կանգնել կամավորության սկզբունքներով: Մինչ այդ ֆիզիկական անձինք, անկախ հարկ վճարող համարվելու պարագայից, չէին կարող ստանալ հարկ վճարողի հաշվառման համար, ինչի հետևանքով վերջիններս ավելացված արժեքի հարկի պարտավորություն կրելու պարագայում չէին կարողանում դուրս գրել հարկային հաշիվներ՝ գնորդ կողմի համար առաջացնելով հաշվանցման խնդիրներ:

**Նոր օրենքով հստակեցվել են նաև պետական գրանցում նոր ստացած կազմակերպությունների և ֆիզիկական անձանց հաշվառելու համար հարկային տեսչության ընտրության չափանիշները**



**Սահմանվել են նաև անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձանց հարկային հաշվառման (հարկ վճարողի հաշվառման համարի տրամադրման) վերաբերյալ դրույթները, որոնց համաձայն՝ ֆիզիկական անձինք կարող են հաշվառման կանգնել կամավորության սկզբունքներով**

Նոր օրենքով հստակեցվել են նաև պետական գրանցում նոր ստացած կազմակերպությունների և ֆիզիկական անձանց հաշվառելու համար հարկային տեսչության ընտրության չափանիշները, արդեն հաշվառված կազմակերպությունների և ֆիզիկական անձանց՝ մեկ ստորաբաժանումից մեկ այլ ստորաբաժանում(այդ թվում՝ մասնագիտացված) տեղափոխելու հնարավոր դեպքերը և չափանիշները, հաշվառման վերցնելու համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը, հաշվառման վերցնելու մերժման հիմքերը և այլն:



## ԱՐՑԱԽԻ ԸՆԴԵՐՔԸ ՊԱՇՏՊԱՆՎՈՒՄ Է ԱՌԱՆՑ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԻՑ

«Հարկերի մասին» ԼՂՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ են կատարվել, որոնցով վերացել են օրենսդրական հակասություններն ու անհամապատասխանությունները: Օրենքի փոփոխությամբ հստակեցվել են հարկային մարմնի պաշտոնատար անձանց գործողությունների գանգատարկման իրավական հիմքերը, կատարելագործվել և պարզեցվել հարկային գերավճարները հարկ վճարողի այլ պարտավորությունների դիմաց հաշվանցելու և(կամ) այդ գումարները հարկ վճարողին վերադարձնելու ընթացակարգերը: Օրենքի կատարմամբ նվազագույնի են հասնելու նաև ապօրինի ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու կամ առանց թույլտվության ընդերքը կամ բնական պաշարներն օգտագործելու դեպքերը: Նախկինում սահմանված չէր տուգանքի նվազագույն շեմ նման գործունեության համար, ինչի արդ-

**Օրենքի կատարմամբ նվազագույնի են հասնելու նաև ապօրինի ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու կամ առանց թույլտվության ընդերքը կամ բնական պաշարներն օգտագործելու դեպքերը**

յունքում ապօրինի ձեռնարկատիրության համար գանձվող տուգանքները շատ դեպքերում ավելի քիչ էին լինում, քան դրանց արդյունքում պետությանը պատճառված վնասի չափն էր: Բացի այդ, պատասխանատվություն չէր նախատեսվում՝ բնական պաշարներն առանց թույլտվության օգտագործելու համար:

## ՍՈՒԲՍԻԴԻԱՆԵՐԻՑ ԵՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ՕԳՏՎԵԼՈՒ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՇԱՏԱՆՈՒՄ ԵՆ

Հարկ վճարողների համար ստեղծվել են պետության կողմից տրամադրվող արտոնություններից ու սուբսիդիաներից օգտվելու առավել ամբողջական հնարավորություններ՝ «Շահութահարկի մասին» ԼՂՀ օրենքում կատարված փոփոխությունների շնորհիվ: Դրանցով նաև քչացել են հարկումից խուսափելու հնարավորությունները և ապահովվել տեղեկությունների՝ միատեսակ ձևով ներկայացումը հարկային մարմին:




**«Դրամարկղային գործառնությունների մասին» ԼՂՀ օրենքում կատարվել են փոփոխություններ, որոնց շնորհիվ սահմանափակվում են կանխիկ դրամով իրականացվող գործառնությունները և նվազում հարկումից խուսափելու հավանականությունները**

## ԺԱՄԿԵՏԱՅԻՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄԸ՝ ՃՇՏՎԱԾ ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐԵՐ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ, ՎԵՐԱՆՈՒՄ Է

Հարկ վճարողների կողմից ներկայացվող տեղեկությունների ձևերը միատեսակ են դառնում, և գրավի առարկա գույքի բռնագանձման ժամանակ առաջացող հարկային խնդիրները լուծվում են: Այս հնարավորությունը տալիս են «Եկամտահարկի մասին» ԼՂՀ օրենքում կատարված փոփոխությունները: Իսկ ֆիզիկական անձինք հնարավորություն են ստանում հարկային մարմին ներկայացրած տարեկան եկամուտների հայտարարագրերում սխալներն ինքնուրույն հայտնաբերելու դեպքում ներկայացնելու ճշտված հայտարարագրեր՝ առանց ժամկետային սահմանափակման, ինչը գործում էր նախկինում:

## ՕՐԵՆՔՆ ԱՋԱԿՑՈՒՄ Է ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՈԼՈՐՏԻՆ

«Ավելացված արժեքի հարկի մասին» ԼՂՀ օրենքում փոփոխություններ են կատարվել, որոնք հիմնականում ուղղված են գյուղատնտեսական ոլորտի կազմակերպությունների գործունեության արդյունավետության բարձրացմանը: Դրանցով տարանջատվում են նաև ԱԱՀ-ով հարկման առումով ձեռնարկատիրական նպատակ հետապնդող և չհետապնդող գործարքները և ներդրվում ԱԱՀ-ի հաշվառմանն առնչվող առավել արդարացի ու կիրառության տեսանկյունից առավել պարզ մոտեցումներ:

## ՀԱՎԱՍԱՐ ՊԱՅՄԱՆՆԵՐ՝ ԼՂՀ ԵՎ ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Ժամանակավոր անաշխատունակության նպաստի իրավունք ստանալիս ԼՂՀ և օտարերկրյա քաղաքացիներն(քաղաքացիություն չունեցող անձինք) օգտվելու են հավասար պայմաններից: Այս դրույթը գործում է «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» ԼՂՀ օրենքում փոփոխություններ կատարելուց հետո: Նաև բարձրանում է աշխատողի՝ աշխատանքի ընդունումը օրենսդրությամբ սահմանված կարգով գրավոր չձևակերպելու դեպքերի դեմ պայքարի արդյունավետությունը, վերանում են օրենսդրական անհամապատասխանությունները, կանոնակարգվում է ավելի վճարված գումարների հաշվանցման գործընթացը:

## ՀԱՐԿՈՒՄԻՑ ԽՈՒՍԱՓԵԼՈՒ ԵՎ ՉԱՇԽԱՏԱԾ ԺԱՄԱՆԱԿԻ ԴԻՄԱՑ ՎԱՐՁԱՏՐՎԵԼՈՒ ՌԻՍԿԵՐԸ ՆՎԱԶՈՒՄ ԵՆ

«Դրամարկղային գործառնությունների մասին» ԼՂՀ օրենքում կատարվել են փոփոխություններ, որոնց շնորհիվ սահմանափակվում են կանխիկ դրամով իրականացվող գործառնությունները և նվազում հարկումից խուսափելու հավանականությունները: Ընդունվել է նաև նոր օրենք՝ «Ժամանակավոր անաշխատունակության նպաստների մասին», որով նվազում են գործատուի համաձայնությամբ վարձու աշխատողի՝ աշխատանքի չներկայանալու և այդ ժամանակահատվածի համար պետական բյուջեից վարձատրվելու ռիսկերը:



***ԼՂՀ վարչապետ Արա Հարությունյան.***
*«Հարկային ծառայությունը շատ դժվար տարում կարողացել է իրագործել բոլոր ծրագրերը՝ առանց ցնցումների և միջամտության»*

# ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԷԻՆ

## Վարչապետի գնահատականն է

ԼՂՀ նախագահը, իշխանությունը ողջունում են հարկային ծառայությանը, որը շատ դժվար տարում կարողացել է իրագործել բոլոր ծրագրերը՝ առանց ցնցումների և միջամտության: Առաջընթաց կա. մուտքերը գերակատարվել են: Կարևորում եմ հատկապես հանրային իրազեկմանն ուղղված միջոցառումները: Աշխատելով հազարավոր տնտեսվարողների հետ՝ կարողացել եք հաստատել և ամրացնել հարկատուների հետ կապը: Արդեն հազվադեպ են հարկատուները բողոքում, թե խախտումներ կատարել են անտեղյակության հետևանքով: Հարկային ծառայության դերը մեծ է նաև քաղաքացիների հոգեբանությունը փոխելու հարցում: Նրանք պետք է գիտակցեն, որ հենց իրենց կողմից պետական բյուջե փոխանցված միջոցների հաշվին են կառուցվում դպրոցներ, մանկապարտեզներ, ճանապարհներ: Եվ միայն դրանց միջոցով է հնարավոր ապահովել երկրի զարգացումը:

Ողջունելի են 2011-ի ընթացքում կատարված բարեփոխումները՝ ուղղված փաստաթղթային բեռը պարզեցնելուն և թեթևացնելուն: Այդ աշխատանքները շարունակական պետք է լինեն: Նկատելի են նաև ծառայության ջանքերը՝ բարձրացնելու աշխատակիցների մասնագիտական պատրաստվածությունը: Այսօր արդեն ևս մեկ խնդիր է առաջանում՝ տնտեսվարողների հետ բացատրական աշխատանքներ տանելը: Դրան կօգնեն հարկային ծառայության կազմակերպած հանդիպումները և պաշտոնական կայքը:

Հարկային ծառայությանը հաջողվել է հաղթահարել բոլոր դժվարությունները նախորդ տարի: 2012-ին նշաձողերը շատ ավելի բարձր են լինելու, սակայն ստեղծված ռեզերվներն ու ծրագրերը թույլ են տալու այս տարվա վերջում ևս արձանագրել հաջողություններ՝ մեր խնդիրներն իրականացնելու ճանապարհին:

***ԼՂՀ ՀՊԾ պետ Արտակ Բալայան.***

*«Այս բարեփոխումները միտված են ինչպես հարկային համակարգի աշխատանքի կատարելագործմանը, այնպես էլ բիզնեսի համար բարենպաստ միջավայր ստեղծելուն»*



Առաջընթաց՝ բոլոր ուղղություններով: Հարկային ծառայության նախաձեռնած բարեփոխումները տալիս են իրենց արդյունքը: 2011-ին հսկողական գործընթացների բարելավմամբ հնարավոր է դարձել կրճատել հարկային ստուգումների քանակը՝ բարձրացնելով արդյունավետությունը: Օրենսդրական փոփոխություններով հարկային ծառայությունը հարմարավետ դաշտ է ստեղծել բիզնեսի համար: Համակարգի արդիականացման շնորհիվ կրճատվել են նախկին երկար ընթացակարգերը: Իսկ հանրության իրազեկման ուղղությամբ աշխատանքները նպաստել են համակարգի թափանցիկությանն ու հարկատու-հարկային մարմին հարաբերությունների բարելավմանը:

# ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՈՒՄԻՑ ՄԻՆՉԵՎ ՀԱՆՐԱՅԻՆ ԻՐԱԶԵԿՈՒՄ

## Բարեփոխվում են առանցքային 4 ուղղությունները

**-Պարոն Բալայան, ի՞նչ արդյունքներ է արձանագրել ծառայությունը 2011 թվականին:**

-2011 թվականին հարկային մարմինը շարունակել է դեռևս 2008 թվականին ձեռնարկած աշխատանքները՝ հսկողական գործընթացների բարելավման, հանրային իրազեկման աշխատանքների ընդլայնման, օրենսդրական դրույթների կատարելագործման, ինչպես նաև համակարգի արդիականացման ուղղություններով: Արդյունքում հաջողվել է ապահովել և գերակատարել պետական բյուջեի՝ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով մուտքերը՝ ապահովելով 23մլրդ 717մլն դրամ, որը պլանավորված ցուցանիշը գերազանցել է 2.2%-ով կամ 517մլն դրամով, իսկ նախորդ տարվա նույն ցուցանիշը՝ 10.3%-ով կամ 2մլրդ 207մլն դրամով: Ընդ որում, աճ է արձանագրվել բոլոր ուղղություններում՝ հարկային եկամուտներ, պետական տուրք, պարտադիր սոցիալական ապահովության վճարներ:

**-Ծառայության աշխատանքների արդյունավետության մասին խոսելիս, թերևս, անհրաժեշտ է ընդգծել հսկողական աշխատանքների դերը: Ի՞նչ որակական փոփոխություններ ունեք այս ուղղությամբ:**

Այս տարի անձնական հաշվի քարտերի ենթածրագիրն ենք նաև փորձարկելու, որից հետո առանձին ենթածրագրեր ամբողջացվելու են մեկ ընդհանուրի մեջ՝ ապահովելով համակարգի աշխատանքների ավտոմատացումը: Նախատեսում ենք ներդնել նաև հաշվետվությունների ընդունման և ապառքների կառավարման էլեկտրոնային համակարգ, ինչը նշանակալի կբարձրացնի աշխատանքների արդյունավետությունն ու որակը

-Այս հարցում մենք առաջնորդվում ենք վերջին տարիների անփոփոխ տրամաբանությամբ: Ստուգումների թիվը պետք է կրճատվի, սակայն դրանք պետք է դառնան առավել նպատակային, առավել հասցեական: Այդ նպատակով հաշվետու տարում ստուգման ենթակա հարկ վճարողների ընտրությունը մեծամասամբ իրականացվել է ռիսկային չափանիշների հիմքով: Արդյունքում հնարավոր է դարձել էապես կրճատել ստուգումները և հսկողությունը կենտրոնացնել տնտեսության առավել ռիսկային հատվածների վրա: Ընդհանուր առմամբ՝ նախորդ տարվա համեմատ 2011 թվականին ստուգումները պակասել են շուրջ 45%-ով, փոխարենն աճել է ստուգմամբ հայտնաբերված միջին գումարը(նախորդ տարվա համեմատ՝ 60%-ով): Սա խոսուն փաստ է, բայց մենք եղածով չենք բավարարվի: Կիրառված

www.tax.nk.am ■ թեժ գիծ (+374 47) 974-758



**Փորձել ենք նաև կամերալ ուսումնասիրությունների համակարգը զարգացնել: Հստակեցրել ենք երրորդ անձանց կողմից հարկային մարմին ներկայացվող տեղեկությունների ցանկը, ավտոմատացրել կամերալ ուսումնասիրությունների գործընթացը: Այդ աշխատանքները նախատեսում ենք ավարտել այս տարի**

ռիսկային չափանիշները՝ որպես արդյունավետ ստուգումների գործիք, դեկտեմբերին ընդհանրացվել են հարկային ստուգումների պլանավորման հայեցակարգում, որի փորձնական գործարկումը նախատեսված է 2012 թվականին: Ստուգումների որակի բարձրացմանն է միտված նաև մեր կողմից մշակված և 2012-ից կիրառության մեջ դրված ստուգումների իրականացման մեթոդական ուղեցույցը, որն ուղղված է ստուգմամբ սխալների, տարբերակված մոտեցումների բացառմանը: Այն նաև սկսնակ ստուգողներին հնարավորություն կընձեռի առանց տևական փորձի իրականացնել որակյալ ստուգումներ: Աշխատանքներ են տարվել նաև կամերալ ուսումնասիրությունների համակարգի զարգացման և գործունակության բարձրացման ուղղությամբ, մասնավորապես՝ հստակեցվել է երրորդ անձանց կողմից հարկային մարմին պարտադիր ներկայացվող տեղեկությունների ցանկը: Զուգահեռ աշխատանքներ են տարվել կամերալ ուսումնասիրությունների գործընթացի ինքնագործարկման(ավտոմատացման) ուղղությամբ: Ենթահամակարգի ամբողջական ավտոմատացման աշխատանքները նախատեսվում է ավարտին հասցնել 2012 թվականին:

**-Ի՞նչ ուղղվածություն ունեն 2011-ին իրականացված օրենսդրականբարեփոխումները:**

-2011 թվականին գրեթե բոլոր հարկատեսակների մասին օրենքներում կատարվել են փոփոխություններ, այդ թվում՝ ընդունվել երկու նոր օրենքներ՝ «Արտոնագրային վճարների մասին» և «Կազմակերպություններին և ֆիզիկական անձանց հարկային հաշվառման վերցնելու և հարկային հաշվառումից հանելու մասին», որոնք գործողության մեջ են դրվել 2012 թվականի հունվարի 1-ից: Առաջին օրենքը մշակվել է՝ փոքր ձեռնարկատիրությունների համար հարկման պարզ մեխանիզմներ կիրառելու նկատառումով՝ նրանց ազատելով հարկային մարմիններին հաշվարկ-հաշվետվություններ ներկայացնելու պարտավորությունից, իսկ երկրորդով կարգավորվում և հստակեցվում են հարկ վճարողի՝ հարկային մարմնում հաշվառվելու հետ կապված հարաբերությունները: Կատարված որոշ փոփոխություններով պարզաբանվում և հստակեցվում են գործող օրենսդրական դրույթները, սահմանվում վարչարարական նոր գործիքներ, առավել նպաստավոր պայմաններ ստեղծվում գործունեության առանձին ոլորտների զարգացման համար: Այսպես՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» օրենքում կատարված փոփոխություններով ԱԱՀ-ից ազատվել են գյուղտեխնիկայի ու դրա մասերի իրացումը, և մինչև 2014-ի հունվարի 1-ը՝ ոռոգման ջրի մատակարարման գործարքները, որոնք բխում են Արցախում գյուղատնտեսության զարգացման համար պայմաններ ապահովելու անհրաժեշտությունից: «Հարկերի մասին» օրենքի որոշ փոփոխություններով ապառքները կառավարելու հնարավորություն է ստեղծվում, իսկ «Դրամարկղային գործառնությունների մասին» օրենքի փոփոխությամբ կրճատվում են կանխիկ շրջանառության ծավալներն ու հարկումից խուսափելու հնարավորությունները:

**-Բարեփոխումներն արդյունավետ են լինում այնքանով, որքանով դրանք հասանելի են հասցեատերերին, այս դեպքում՝ հարկատուներին: Նախորդ տարվա ընթացքում ի՞նչ աշխատանքներ են իրականացվել իրազեկման ուղղությամբ:**

-Հարկ վճարողների իրազեկվածության առավել բարձր մակարդակի ապահովումը թերևս մեր գերակա խնդիրներից է, որի արդյունքում նվազում են հարկատուների կողմից կատարվող օրենսդրական խախտումները, պայմաններ ստեղծվում նրանց կողմից պետական բյուջե վճարման ենթակա հարկերի և այլ պարտադիր վճարների ինքնուրույն, ինքնակամ գնահատման և վճարման համար, որն էլ, ի վերջո, նպաստում է բյուջեի եկամուտների աճին: Հենց այս նկատառումից ելնելով էլ 2011-ին մենք լայնածավալ միջոցառումներ նախաձեռնեցինք. հաստատվեց հանրային իրազեկման ծրագիր, որով հստակեցվեցին այս ուղղությամբ տարվա անելիքները, սահմանվեցին իրականացման ենթակա միջոցառումներ՝ ըստ պատասխանատուների: Դրա շրջանակներում տարվա ընթացքում տարբեր ԶԼՄ-ներով նաև մեր պաշտոնական կայքի և «Հարկատու» ամսագրի միջոցով տեղեկացրել ենք համակարգում կազմակերպվող մրցույթների, օպերատիվ հետախուզական բացահայտումների, իրականացված ստուգումների մասին: Հարկային օրենսդրության ճիշտ ընկալման նպատակով հարկ վճարողների հետ հանրապետության բոլոր շրջաններում և մայրաքաղաքում կազմակերպել ենք սեմինար-խորհրդակցություններ:

Կցանկանայի առանձնակի շեշտել, որ յուրաքանչյուր օրենսդրական կամ ենթաօրենսդրական փոփոխությունից անմիջապես հետո հարկ վճարողներին հուզող հարցերին պարզաբանումներ տալու նպատակով կազմակերպում ենք նման սեմինարներ, որոնց նրանք մասնակցում են մեծ հետաքրքրությամբ և ակտիվությամբ: Քաղաքացիների, կազմակերպությունների և հասարակական միավորումների հետ համագործակցություն ապահովելու նպատակով ձևավորվել է նաև ծառայությանն առընթեր հասարակական խորհրդակցական մարմին, որում ընդգրկվել են տարբեր ոլորտների ներկայացուցիչներ: Նրանց կարծիքին են ներկայացվել հարկային ոլորտին առնչվող օրինագծերը՝ վերջիններիս մասնակցությունը բարեփոխումների ընթացքին ապահովելու նպատակով: Պաշտոնական կայքում տեղադրել ենք ոլորտին վերաբերող, հաճախ հնչող հարցերի ու դրանց պատասխանների տվյալների բազա: 2012-ին կշարունակենք այս ուղղությամբ աշխատանքները՝ կիրառելով հարկ վճարողներին ժամանակին, պարբերաբար իրազեկելու նոր մեթոդներ: Նախատեսում ենք նաև հարկային մարմնի արհեստավարժ և փորձառու մասնագետների միջոցով հարկային մարմնում պարբերաբար կազմակերպել հարկ վճարողների ուսուցումներ:

**-Արագ զարգացող միջավայրում հարկային ծառայությունը ևս պետք է պատրաստ լինի: Նախորդ տարվա ընթացքում ի՞նչ է արվել համակարգի արդիականացման ուղղությամբ:**

-Հարկային մարմնի տեղեկատվական կարողությունների զարգացումը դեռևս 2008-ից սահմանվել է որպես առաջնային կարևորության քայլ: Արդյունքում մեզ հաջողվել է համակարգը տեխնիկապես վերազինել՝ սկսած աշխատակիցներին համակարգչային տեխնիկայով ապահովելուց մինչև աշխատանքների ավտոմատացում: Այսօր արդեն իսկ աշխատանքները մեծամասամբ իրականացվում են տարբեր ենթածրագրերով: 2012 թվականին նախատեսվում է փորձարկել անձնական հաշվի քարտերի ենթածրագիրը, որի գործարկումից հետո առանձին ենթածրագրեր կամբողջացվեն մեկ ընդհանուր ծրագրում՝ ապահովելով համակարգի ամբողջ աշխատանքների ավտոմատացումը: Ծրագրի շահագործումից հետո նախատեսվում է նաև հաշվետվությունների ընդունման և ապառքների կառավարման էլեկտրոնային համակարգերի ներդրում, ինչը նշանակալիորեն կբարձրացնի աշխատանքների արդյունավետությունը և որակը: Զուգահեռաբար 2011-ին բարելավվել են նաև աշխատակիցների աշխատանքային պայմանները. Ստեփանակերտ քաղաքի և Շուշիի շրջանի հարկային տեսչություններն այժմ գործում են վերանորոգված, կահավորված և տեխնիկապես վերազինված նոր պայմաններում, բարելավվել է խոշոր հարկ վճարողների վարչության հաշվետվությունների ընդունման սրահը: Հաշվետու տարում ընդունվել է նաև հսկիչ կետերի վերակառուցման-վերազինման ծրագիր: Հաշվի առնելով, որ հանրապետության տարածք ապրանքանյութական արժեքների շարժն այսօր հիմնականում կատարվում է Աղավնոյի հսկիչ կետի տարածքով՝ վերակառուցման աշխատանքները սկսվել են այդ տեղամասի հսկիչ կետից. բարեկարգվել է նաև շենքի շրջակայքը, կահավորվել կայանման կետը, տեղադրվել են համակարգիչներ, տեսախցիկներ, կենտրոնական ապարատի հետ էլեկտրոնային կապ է ստեղծվել, որը հնարավորություն է տալիս իրական ժամանակում(on-line ռեժիմով) հսկողություն սահմանել հսկիչ կետով տեղաշարժերի նկատմամբ: 2012 թվականին նույն տեխնիկական չափորոշիչներով նախատեսվում է կառուցել նաև Նոր Խարխապուտի հսկիչ կետի նոր շենքը, ինչպես նաև գործարկել նոր հսկիչ կետ՝ հանրապետության տարածք ապրանքանյութական արժեքների տեղափոխման շրջանցումները կանխելու նպատակով:

**-Թվարկված բոլոր նորամուծությունները կարող են արդյունավետ գործել միայն արհեստավարժ աշխատակիցների առկայության դեպքում: Ի՞նչ ձեռքբերումներ կան կադրային քաղաքականության մեջ:**

-Իսկապես, աշխատանքների արդյունավետության և որակի ապահովման հարցում կարևոր նախապայման է որակյալ և արհեստավարժ անձնակազմի առկայությունը: Այդ առումով, որպես ծառայության պետ, մեծ տեղ եմ հատկացնում կադրային ճիշտ քաղաքականության վարմանը, աշխատակիցների մասնագիտական պատրաստվածության բարձրացման, փորձառու կադրերով համակարգի համալրման աշխատանքներին: Մշտական ուշադրության կենտրոնում ենք պահում նաև աշխատողների խրախուսման և պատժամիջոցների հստակ մեխանիզմների կիրառումը, կատարված խախտումներին օբյեկտիվ և ժամանակին արձագանքումը: 2011-ին այս ուղղությամբ բավականին աշխատանքներ են տարվել. լավագույն հարկային ծառայողներին շնորհվել են դասային և հատուկ կոչումներ, տրվել դրամական պարգևներ, իսկ ծառայողի վարքագծի կանոնները խախտած աշխատակիցների նկատմամբ՝ կիրառվել պատասխանատվության միջոցներ: Տարվա ընթացքում կազմակերպվել է նաև 53 ծառայողների ատեստավորում, որով հստակեցվել է աշխատակիցների համապատասխանությունը զբաղեցրած պաշտոններին: Կադրերի մասնագիտական հմտությունները կատարելագործելու նպատակով հարկ վճարողների սպասարկման և վերահսկողական գործառույթներ իրականացնող 59 աշխատակիցների հետ անցկացվել են վերապատրաստման դասընթացներ՝ հաշվապահական հաշվառման, հաշվարկ-հաշվետվությունների լրացման, ստուգումների և ուսումնասիրությունների կազմակերպման թեմաներով: Ցավոք, դրանց յուրացման աստիճանը գնահատելու նպատակով կազմակերպված ստուգարքի արդյունքում դրական գնահատական են ստացել միայն վեցը: Նշանակում է՝ բավական անելիք ունենք՝ որակյալ կադրեր պատրաստելու ուղղությամբ, ինչն ընդգրկված է մեր առաջիկա անելիքների շարքում: Մասնավորապես՝ կիրականացվեն անձնակազմի կանոնավոր և համապարտադիր ուսուցումներ, վերապատրաստումներ, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետությունում և արտերկրում:



Օրենսդրական վերջին փոփոխությունները թեթևացրել են Արցախի ամենամեծ հարկային տեսչության ծանրաբեռնվածությունը: Իհարկե, դա չի նշանակում, որ Ստեփանակերտի տեսչությունը թուլացնելու է ջանքերը՝ սպասարկման բարձր որակ ապահովելու և արդյունավետ ընթացիկ վերահսկողություն իրականացնելու ուղղությամբ: Զուգահեռաբար շարունակելու է հսկել, որ թե՛ հարկային ծառայողը պահպանի վարքագծի կանոնները և թե՛ հարկատուն բարեխղճորեն կատարի օրենքի պահանջները: Հատկապես վերջին տարիների բարեփոխումներից հետո տեսչությունը, հսկողական մեխանիզմներ կիրառելուց առաջ, բացատրական աշխատանքներ է իրականացնում հարկ վճարողների հետ: Եվ արդեն ստուգումները զանգվածայինի փոխարեն կատարում է՝ ռիսկային չափանիշներից ելնելով:

# ԲԱՑԱՏՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ, ՀԱՍՑԵԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ

## Այս սկզբունքով է գործում Ստեփանակերտի հարկային տեսչությունը

**-Պարոն Գասպարյան, Ստեփանակերտի հարկային տեսչությունը ծառայության մյուս ստորաբաժանումներից առանձնանում է սպասարկվող հարկատուների մեծ թվով: Ի՞նչ դժվարություններ է դա ենթադրում:**

-Այս տարվա հունվարի մեկի դրությամբ տեսչությունում հաշվառված են 4565 տնտեսվարող սուբյեկտներ: Պարզ է, որ ծավալուն և մշտական աշխատանքներ պետք է կատարենք կամերալ ուսումնասիրությունների, սպասարկման, հաշվառման և վերահսկողական գործառույթներ իրականացնելիս: Եռամսյակի կտրվածքով միջինը 2000 տնտեսվարող սուբյեկտներ են հաշվարկ-հաշվետվություններ ներկայացնում, ինչը, բնականաբար, հերթեր

է առաջացնում: Նման ծանրաբեռնվածությունը վկայում է, որ լուրջ ջանքեր են պահանջվում տեսչությունից՝ բնականոն գործունեությունն ապահովելու համար:

**-Տարեվերջին կատարված օրենսդրական փոփոխությունները որևէ կերպ փոխե՞լ են վիճակը:**

-Դեռ 2009-ի օրենսդրական փոփոխությամբ որոշակի պայմանների բավարարող անհատ ձեռնարկատերերը հնարավորություն են ստացել՝ պահանջվող հաշվարկ-հաշվետվությունները ներկայացնելու կիսամյակային պարբերականությամբ: 2011-ին այդպես են վարվել 457 տնտեսվարող սուբյեկտներ: Դա որոշ չափով թեթևացրել է ծանրաբեռնվածությունը, ինչը դրական ազդեցություն է ունեցել՝ սպասարկման մակարդակը բարձրացնելու և արդյունավետ ընթացիկ վերահսկողություն իրականացնելու առումով: Տարեվերջին «Արտոնագրային վճարների մասին» օրենքի ընդունումը ևս շոշափելի արդյունք է տվել. 108 սուբյեկտներ համարվել են արտոնագրային վճար վճարողներ: Որոշ տնտեսվարող սուբյեկտներ տեղյակ չէին օրենսդրական փոփոխությանը, ինչի համար տարեսկզբից իրականացրել ենք իրազեկման աշխատանքներ: Դրանց արդյունքում, կարծում ենք, 2012-ի երկրորդ եռամսյակում արտոնագրային վճար վճարողների քանակը կավելանա: Կատարված փոփոխությունները տեսչության աշխատակիցներին հնարավորություն են տալիս կենտրոնանալու իրացման առավել մեծ շրջանառություն ունեցող տնտեսվարող սուբյեկտների վրա՝ ապահովելով իրականացվող աշխատանքների արդյունավետությունն ու պատշաճ որակը:

**-Նախորդ տարի տեսչության գույքային պայմանները բարելավվել են: Համարժեք փոփոխություններ կատարվե՞լ են նաև տեսչության աշխատանքներում, ամենից առաջ՝ սպասարկման ոլորտում:**



***Ստեփանակերտի հարկային տեսչության պետ Գեորգի Գասպարյան.***

*«Հարկ վճարողների սպասարկման որակի բարելավումը հարկային համակարգի առաջնահերթություններից է: Միաժամանակ տեսչությունը խիստ հսկողության տակ է պահում հարկային ծառայողի վարքագծի կանոնների պահպանումը»*

-Ինչպես ճիշտ նկատեցիք, 2011-ի հուլիսից տեսչությունը գործում է նոր, հարմարավետ պայմաններում: Զուգահեռաբար տեսչությունը համալրվել է սպասարկման գործառույթներ իրականացնող մասնագետներով, ինչը էականորեն բարձրացրել է աշխատանքների որակը: Նախորդ տարի տեսչության աշխատակիցները հարկ վճարողներին պարբերաբար ներկայացրել են հարկային ոլորտում, օրենսդրության մեջ կատարված փոփոխությունները: Դա նպաստել է, որ վերջիններս ճիշտ ընկալեն ու կիրառեն օրենսդրական դրույթները: Պարզաբանվել են նաև հարկ վճարողներին հուզող հարցերը՝ հեռախոսազանգերի և անհատական հանդիպումների միջոցով: Հարկ վճարողների սպասարկման որակի բարելավումը հարկային համակարգի առաջնահերթություններից է: Միաժամանակ տեսչությունը խիստ հսկողության տակ է պահում հարկային ծառայողի վարքագծի կանոնների պահպանումը:



**-Իսկ ինչպե՞ս եք գնահատում ստուգումների արդյունավետությունը 2011-ին:**

-Նախորդ տարի մեծ ուշադրություն ենք դարձրել հսկողական աշխատանքների արդյունավետության բարձրացմանը: Այդ նպատակով ստուգման ենթակա հարկ վճարողների ընտրությունը մեծամասամբ իրականացվել է ռիսկային չափանիշների հիմքով: Արդյունքում՝ էապես կրճատվել է ստուգումների թիվը, և հսկողությունը կենտրոնացվել է ռիսկային խմբում ընդգրկված տնտեսվարող սուբյեկտների վրա: Շարունակել ենք առևտրի ոլորտում ստվերային շրջանառությունների կրճատմանն ուղղված միջոցառումները և հարկ վճարողների կողմից փաստաթղթավորման պահանջների պատշաճ կատարման նկատմամբ հսկողության իրականացումը: Աշխատել ենք նաև բացահայտել հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման խախտումները: 125 ստուգում ենք իրականացրել՝ նախորդ տարվա 170-ի փոխարեն: Դրանց արդյունքում հաշվարկվել են լրացուցիչ 180.7մլն դրամի պարտավորություններ՝ 2.5 անգամ գերազանցելով նախորդ տարվա նույն ցուցանիշը: 2012-ին նախատեսում ենք պահպանել գործելաոճը. նախ՝ բացատրական աշխատանքներ կիրականացնենք, ապա՝ ռիսկային չափանիշների հիմքով հսկողության մեխանիզմներ կկիրառենք՝ հարկային հսկողությունը դարձնելով առավել հասցեական:

**-Այդ գործելաոճն անդրադարձե՞լ է նախորդ տարվա մուտքերի վրա:**

-Հավաքագրել ենք ավելի քան 3816մլն դրամի հարկեր, տուրքեր և պարտադիր վճարներ՝ գրեթե 20%-ով գերազանցելով նախորդ տարվա մակարդակը: Մոտ 2360մլն դրամը կազմել են հարկային եկամուտները, ավելի քան 1370մլն դրամը՝ պարտադիր սոցիալական ապահովության վճարները, իսկ ավելի քան 86մլն դրամը կազմել է պետական տուրքը: Հարկային եկամուտների պլանները գերակատարվել են մի շարք եկամտատեսակների մասով՝ ավելացված արժեքի հարկ(մոտ 25%), եկամտահարկ(գրեթե 10%), ակցիզային հարկ(մոտ 179%), առևտրի հարկ(13%) և այլն:

**-Պարոն Գասպարյան, 2011-ի ձեռքբերումները հաշվի առնելով՝ որո՞նք են լինելու 2012-ի գլխավոր քայլերը:**

**2011-ի հուլիսից տեսչությունը գործում է նոր, հարմարավետ պայմաններում: Զուգահեռաբար տեսչությունը համալրվել է սպասարկման գործառույթներ իրականացնող մասնագետներով, ինչը էականորեն բարձրացրել է աշխատանքների որակը**

-Տեսչությունը հետամուտ է լինելու առաջնահերթ խնդիրների լուծմանը և նպատակների իրագործմանը: Այս տարի ևս աշխատելու ենք կատարել պլանային առաջադրանքները: Այդ նպատակով առաջնահերթությունը տալու ենք հարկ վճարողների սպասարկման որակի բարձրացմանը, գործարար դաշտի հետ արդյունավետ համագործակցության ապահովմանը և հսկողական աշխատանքների արդյունավետության բարձրացմանը: Զգալի աշխատանքներ ունենք կատարելու ապառքների նվազեցման ուղղությամբ: Այդ առումով, կարծում եմ, էական նշանակություն կունենա ապառքների գանձման նոր մեխանիզմը: Այն ընդունվել է «Հարկերի մասին» օրենքում կատարված փոփոխության համաձայն, և դրա կիրառման իրավասությունը տրվել է հարկային մարմնին:

# ՀԻՇԵՔ ՀԱՐԿԱՅԻՆԸ

# ՀԱՇՎԱՊԵՍ

# ԱՅՍ ՕՐԵՐԻՆ

**Հունիս**

| I | II | III | IV | V | VI | VII |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | 1 | 2 | 3 |
| 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 |
| 11 | 12 | 13 | 14 | 15 | 16 | 17 |
| 18 | 19 | 20 | 21 | 22 | 23 | 24 |
| 25 | 26 | 27 | 28 | 29 | 30 | |

բոլոր մանրամասներն այստեղ՝

**www.tax.nk.am**

# 100 ԽՈՇՈՐՆԵՐՆ ԱՊԱՀՈՎԵԼ ԵՆ ՊԵՏԲՅՈՒՋԵԻ ՄՈՒՏՔԵՐԻ 62.4%-Ը




**2011** թվականի ընթացքում ԼՂՀ առաջին 100 խոշոր հարկ վճարողները պետական բյուջե են մուծել 14.8մլրդ դրամ ընդհանուր գումարով հարկեր, տուրքեր և պարտադիր սոցիալական ապահովության վճարներ: Դա պետբյուջեի հարկերի, տուրքերի և պարտադիր վճարների ընդհանուր մուտքերի 62.4%-ն է: Նկատենք, որ 2010-ի ընթացքում 100 խոշոր հարկատուների կատարած նույն վճարումների ընդհանուր գումարը կազմել է շուրջ 12.3մլրդ դրամ, այսինքն՝ ընդհանուր մուտքերի 57.2%-ը:

## «ԲԵՅՋ ՄԵԹԸԼՍ»-Ը ՉԻ ՆԱՀԱՆՋՈՒՄ

100 խոշորների ցանկը, ինչպես 2010 թվականին, այնպես էլ այս տարվա ընթացքում գլխավորում է «Բեյզ Մեթըլս» ՓԲԸ-ն: 2010-ին ընկերությունը վճարել է 4.1մլրդ, իսկ այս տարի՝ 4.2մլրդ դրամի հարկեր, տուրքեր և պարտադիր վճարներ(այդ թվում՝ պարտադիր սոցիալական ապահովության վճարներ): Բոլոր ցուցանիշները վկայում են, որ թիվ մեկ հարկատուին հաջողվել է հերթական անգամ գերազանցել նախորդ տարվա նույն ժամանակահատվածի արդյունքը: Առաջին եռյակում «Բեյզ Մեթըլսին» հաջորդում են «Ղարաբաղ Տելեկոմ» և «Արցախէներգո» ՓԲԸ-ները: Երեք խոշոր հարկ վճարողներն այս տարի պետբյուջե են փոխանցել ավելի քան 7մլրդ դրամի հարկեր, տուրքեր և պարտադիր վճարներ(այդ թվում՝ պարտադիր սոցիալական ապահովության վճարներ), այսինքն՝ պետբյուջեի հարկերի, տուրքերի և պարտադիր վճարների գրեթե 30%-ն ապահովել են 3 խոշորները: 2010-ի արդյունքներով այդ ցուցանիշը կազմել է ավելի քան 6մլրդ դրամ կամ պետբյուջեի հարկերի, տուրքերի և պարտադիր վճարների գրեթե 30%-ը: Այսինքն՝ աճի միտում կա՝ համաձայն 100 խոշոր հարկ վճարողների կողմից հայտարարագրված, պետական բյուջե հաշվարկված և վճարված հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների(այդ թվում՝ պարտադիր սոցիալական ապահովության վճարների) ցուցանիշի մեծության: Հաշվարկված հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների ցուցանիշը 2010-ին ավելի քան 13մլրդ դրամ էր, իսկ 2011-ին՝ գրեթե 15մլրդ: Իսկ վճարված հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների ցուցանիշն այս տարի աճել է 2,5մլրդ դրամով կամ ավելի քան 20%-ով՝ կազմելով գրեթե 15մլրդ դրամ: Եթե 2010-ին 100 խոշորների տարեկան վճարած հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների(այդ թվում՝ պարտադիր սոցիալական ապահովության վճարների) տեսակարար կշիռը կազմել է ընդհանուրի 57%-ից ավելին, ապա այս տարի՝ ավելի քան 62%-ը:



**Նախորդ տարվա համեմատ 100 խոշոր հարկ վճարողների կողմից հայտարարագրված աշխատողների ամսական միջին ցուցակային թվում և աշխատանքի վարձատրությանն ուղղված միջոցների ցուցանիշներում այս տարվա ընթացքում ևս նկատվել է աճ: 2010-ի համեմատ առաջին 3 խոշոր հարկ վճարողների մասով աշխատանքի վարձատրությանն ուղղված միջոցների ցուցանիշը 2011-ին աճել է ավելի քան 63մլն դրամով՝ կազմելով ավելի քան 474մլն դրամ**

## ՄԻՋԻՆ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԸ 121.4 ՀԱԶԱՐ ԴՐԱՄ Է

Նախորդ տարվա համեմատ 100 խոշոր հարկ վճարողների կողմից հայտարարագրված աշխատողների ամսական միջին ցուցակային թվում և աշխատանքի վարձատրությանն ուղղված միջոցների ցուցանիշներում այս տարվա ընթացքում ևս նկատվել է աճ: Աշխատողների ամսական միջին ցուցակային թիվը 2010-ին կազմել էր 8547 մարդ, այս տարի՝ 8692 մարդ, իսկ աշխատանքի վարձատրությանն ուղղված միջոցների ամսական ցուցանիշը՝ համապատասխանաբար մոտ 951մլն և 1055մլն դրամ: Ամսական միջին աշխատավարձը նախորդ տարի ավելի քան 111հազ. դրամ էր, իսկ այս տարի՝ ավելի քան 121հազար: 2010-ի համեմատ առաջին 3 խոշոր հարկ վճարողների մասով աշխատանքի վարձատրությանն ուղղված միջոցների ցուցանիշը 2011-ին աճել է ավելի քան 63մլն դրամով՝ կազմելով ավելի քան 474մլն դրամ:

## ԻՐԱՑՄԱՆ ԾԱՎԱԼՆԵՐՆ ԱՃԵԼ ԵՆ

Այս տարի 100 խոշոր հարկ վճարողների կողմից հայտարարագրված իրացման ծավալի ցուցանիշը(առանց ԱԱՀ-ի) կազմել է մոտ 119մլրդ դրամ: Մինչդեռ 2010-ին այն գրեթե 101մլրդ դրամ էր: Սա նշանակում է, որ նախորդ տարվա համեմատ մոտ 18մլրդ դրամով կամ 18%-ով իրացման ծավալն աճել է:

www.tax.nk.am ■ թեժ գիծ (+374 47) 974-758

## ԱՌԱՋԻՆ 100 ԽՈՇՈՐ ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂՆԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ԿՈՂՄԻՑ ՎՃԱՐՎԱԾ ՀԱՐԿԵՐԻ ԵՎ ՏՈՒՐՔԵՐԻ ՄԵԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| Հ/Հ | ՀՎՀՀ | Հարկ վճարողի անվանումը | Հարկ վճարողի գտնվելու վայրը | 2011թ. հարկ վճարողի կողմից ԼՂՀ պետական բյուջե վճարված հարկերի ընդհանուր գումարը (հազ. դրամ) | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | այդ թվում | | | |
| | | | | Ընդամենը | ուղղակի հարկեր (այդ թվում՝ շահութահարկ, եկամտահարկ) | անուղղակի հարկեր (այդ թվում՝ ԱԱՀ, ակցիզային հարկ) | հաստատագրված վճարներ | այլ հարկեր, տուրքեր և պարտադիր վճարներ |
| 1. | 90016169 | «Բեյզ Մեթըլս» ՓԲԸ | գ.Դրմբոն | 3887125.0 | 801000.0 | 2061000.0 | | 1025125.0 |
| 2. | 90015278 | «Ղարաբաղ Տելեկոմ» ՓԲԸ | ք.Ստեփանակերտ | 1646849.3 | 212302.7 | 1382246.0 | | 52300.6 |
| 3. | 90000186 | «Արցախէներգո» ՓԲԸ | ք.Ստեփանակերտ | 691083.9 | 57922.5 | 588572.4 | | 44589.0 |
| 4. | 90010189 | «Արցախգազ» ՓԲԸ | ք.Ստեփանակերտ | 641600.9 | 23478.0 | 587460.2 | | 30662.7 |
| 5. | 90001386 | «Արցախբանկ» ՓԲԸ | ք.Ստեփանակերտ | 544196.7 | 514286.8 | 2158.8 | | 27751.1 |
| 6. | 90071281 | «Դորոժնիկ» ՍՊԸ | գ.Այգեստան | 375274.5 | 11703.1 | 341446.4 | | 22125.0 |
| 7. | 90012365 | «Քարավան» ՍՊԸ | գ.Բերքաձոր | 347260.0 | 23407.7 | 304431.5 | | 19420.8 |
| 8. | 90002165 | «Վիրաժ» ԱԿ | ք.Ստեփանակերտ | 186660.8 | 47258.8 | 130621.5 | | 8780.5 |
| 9. | 90003442 | «Կապավոր» ՍՊԸ | ք.Ստեփանակերտ | 182666.8 | 44296.9 | 130748.1 | 60.0 | 7561.8 |
| 10. | 90022272 | «Ստեփանակերտի կոնյակի գործարան» ՓԲԸ | ք.Ստեփանակերտ | 175348.2 | 13121.7 | 155899.8 | | 6326.7 |
| 11. | 90070057 | «Արցախ բրենդի կոմպանի» ՓԲԸ | ք.Ասկերան | 140690.3 | 15009.5 | 119502.9 | 263.2 | 5914.7 |
| 12. | 90013144 | «Պետրոլ սերվիս» ՓԲԸ | ք.Ստեփանակերտ | 133783.6 | 5768.2 | 35813.5 | 78752.7 | 13449.2 |
| 13. | 90017188 | «Պանտ» ՍՊԸ | ք.Ստեփանակերտ | 112845.4 | 24157.3 | 83663.0 | | 5025.1 |
| 14. | 90025315 | «Արցախ ՀԷԿ» ԲԲԸ | ք.Ստեփանակերտ | 106945.8 | 92061.1 | 1233.3 | | 13651.4 |
| 15. | 90016752 | «Ճանշին» ՓԲԸ | ք.Ստեփանակերտ | 98466.4 | 9138.7 | 85627.6 | | 3700.1 |
| 16. | 90213015 | «Ավանգարդ» ՍՊԸ | ք.Մարտունի | 94150.5 | 8690.8 | 9146.7 | 6061.0 | 70252.0 |
| 17. | 90002354 | «Հիմնաքար» ՓԲԸ | ք.Ստեփանակերտ | 91197.4 | 66682.0 | 11802.3 | | 12713.1 |
| 18. | 90003056 | «Մեչտա» ԱԿ | ք.Ստեփանակերտ | 86708.7 | 4378.8 | 61520.4 | 788.2 | 20021.3 |
| 19. | 90025307 | «Սուր Նարեկ» ՍՊԸ | ք.Ստեփանակերտ | 81860.1 | 8109.6 | 70823.6 | | 2926.9 |
| 20. | 90016787 | «Սիգմա գրուպ սերվիս» ՓԲԸ | ք.Ստեփանակերտ | 80232.0 | 8718.3 | 68656.7 | | 2857.0 |
| 21. | 90213737 | «Պրոմագրոսերվիս» ՓԲԸ | ք.Մարտունի | 77571.4 | 2082.6 | 74167.5 | | 1321.3 |
| 22. | 90024957 | «Շին-Վեր պլյուս» ՍՊԸ | ք.Ստեփանակերտ | 77367.7 | 8055.9 | 65518.0 | | 3793.8 |
| 23. | 90026446 | «Գլոբալշին» ՍՊԸ | ք.Ստեփանակերտ | 69135.4 | 13197.7 | 53240.2 | | 2697.5 |
| 24. | 90003237 | «Բերդ» ՍՊԸ | ք.Ստեփանակերտ | 67206.4 | 5034.6 | 60356.4 | | 1815.4 |
| 25. | 90013187 | «Ճանշինվերանորոգում» ՓԲԸ | ք.Ստեփանակերտ | 63852.7 | 6154.2 | 54925.6 | | 2772.9 |
| 26. | 90027001 | «Արցախուղի» ՓԲԸ | ք.Ստեփանակերտ | 63596.7 | 13480.7 | 47954.7 | | 2161.3 |
| 27. | 90000143 | «Արդյունաբերական շինարարական կոմբինատ թիվ 1» ԲԲԸ | գ.Բերքաձոր | 60939.3 | 6113.7 | 50272.0 | | 4553.6 |
| 28. | 90282605 | «Հաբանդ» ՍՊԸ | գ.Տող | 60827.9 | 15181.2 | 43919.1 | | 1727.6 |
| 29. | 90022317 | «Գրանդ կոմերց» ՍՊԸ Արցախի մասնաճյուղ | ք.Ստեփանակերտ | 59787.3 | 2889.4 | | | 56897.9 |
| 30. | 90027079 | «Պրիմա գրուպ» ՍՊԸ | ք.Ստեփանակերտ | 55753.2 | 253.1 | | 238.6 | 55261.5 |
| 31. | 90008901 | ԼՂՀ «Հանրային հեռուստառադիոը նկերություն» ՓԲԸ | ք.Ստեփանակերտ | 54214.4 | 8222.0 | 45007.2 | | 985.2 |
| 32. | 90000324 | ԼՂՀ Ոստիկանության պետական պահպանության վարչություն | ք.Ստեփանակերտ | 54110.2 | 749.0 | 52260.9 | | 1100.3 |
| 33. | 90002698 | «Արցախկապ» ՓԲԸ | ք.Ստեփանակերտ | 51291.7 | 7729.8 | 40639.1 | | 2922.8 |
| 34. | 90003261 | «Խաչեն» ՓԲԸ | ք.Ստեփանակերտ | 49610.2 | 9931.0 | 38144.4 | | 1534.8 |
| 35. | 90027209 | «Ադրիանա» ՍՊԸ | ք.Ստեփանակերտ | 48126.0 | 4901.2 | 41693.9 | | 1530.9 |
| 36. | 90281903 | «Պարգև» ՍՊԸ | ք.Հադրութ | 46996.6 | 2212.6 | 17084.1 | | 27699.9 |
| 37. | 90019907 | «Արտադրական կոմբինատ - 3» ՓԲԸ | ք.Ստեփանակերտ | 46825.0 | 9039.1 | 34161.2 | | 3624.7 |
| 38. | 90003477 | «Վերածնունդ» ՍՊԸ | ք.Ստեփանակերտ | 45661.0 | 6303.8 | 36204.2 | | 3153.0 |
| 39. | 90025659 | «Ատրիում» ՍՊԸ | ք.Ստեփանակերտ | 45129.6 | 12292.8 | 28910.4 | | 3926.4 |
| 40. | 90001705 | «Օկեան» ՍՊԸ | ք.Ստեփանակերտ | 43677.7 | 1482.8 | | | 42194.9 |
| 41. | 90013565 | «Աշոցք» ՍՊԸ | ք.Ասկերան | 43039.3 | 11709.6 | 29464.0 | | 1865.7 |
| 42. | 90003099 | «SBS» ՍՊԸ | ք.Ստեփանակերտ | 39828.6 | 2057.8 | | | 37770.8 |
| 43. | 90018172 | «Կապիտալ» ՓԲԸ | ք.Ստեփանակերտ | 39313.9 | 1218.1 | | | 38095.8 |
| 44. | 90012064 | «Բարի Հոգի» ՍՊԸ | ք.Ստեփանակերտ | 37796.3 | 1943.6 | | | 35852.7 |
| 45. | 90016323 | «Բլարգ» ՍՊԸ | ք.Ստեփանակերտ | 36898.3 | 3707.3 | 32232.0 | | 959.0 |
| 46. | 90026928 | «Տեխմոնտաժ» ՍՊԸ | ք.Ստեփանակերտ | 36487.7 | 7530.1 | 28045.7 | | 911.9 |
| 47. | 90026025 | «Երեքնուկ» ՍՊԸ | ք.Ստեփանակերտ | 35808.1 | 1133.1 | 2665.1 | | 32009.9 |
| 48. | 90029873 | «Միկմետալ» ՍՊԸ | ք.Ստեփանակերտ | 34489.1 | 809.7 | 13124.2 | | 20555.2 |
| 49. | 90028854 | «Ջրամատակարարում և ջրահեռացում» ՓԲԸ | ք.Ստեփանակերտ | 34453.8 | 10844.0 | 22059.6 | | 1550.2 |
| 50. | 90012176 | «Վարարակն» ՍՊԸ | ք.Ստեփանակերտ | 34128.3 | 5413.9 | 27503.7 | | 1210.7 |

## ԱՌԱՋԻՆ 100 ԽՈՇՈՐ ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂՆԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ԿՈՂՄԻՑ ՎՃԱՐՎԱԾ ՀԱՐԿԵՐԻ ԵՎ ՏՈՒՐՔԵՐԻ ՄԵԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| Հ/Հ | ՀՎՀՀ | Հարկ վճարողի անվանումը | Հարկ վճարողի մտնվելու վայրը | 2011թ. հարկ վճարողի կողմից ԼՂՀ պետական բյուջե վճարված հարկերի ընդհանուր գումարը (հազ. դրամ) | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | այդ թվում | | | |
| | | | | Ընդամենը | ուղղակի հարկեր (այդ թվում՝ շահութահարկ, եկամտահարկ) | անուղղակի հարկեր (այդ թվում՝ ԱԱՀ, ակցիզային հարկ) | հաստատա-մըրված վճարներ | այլ հարկեր, տուրքեր և պարտադիր վճարներ |
| 51. | 90022299 | «Հրայր» ՍՊԸ | ք.Ստեփանակերտ | 33600.0 | | | | 33600.0 |
| 52. | 90020535 | «Աշոտ Երկաթ» ՍՊԸ | ք.Ստեփանակերտ | 32927.4 | 4457.0 | 25269.4 | 1012.9 | 2188.1 |
| 53. | 90013333 | «Արցախերկսեւմետ» ՓԲԸ | ք.Ստեփանակերտ | 32159.4 | 27998.0 | 1133.8 | | 3027.6 |
| 54. | 90005027 | «Ջրմուղ-Կոյուղի» ՓԲԸ | ք.Ստեփանակերտ | 32032.3 | 8500.0 | 21240.0 | | 2292.3 |
| 55. | 90025118 | «Ստրոյ Սիտի» ՓԲԸ | ք.Ստեփանակերտ | 31354.7 | 6303.1 | 24383.1 | | 668.5 |
| 56. | 90004677 | «Սիփան» ՓԲԸ | ք.Ստեփանակերտ | 30390.0 | 2631.5 | 26756.2 | | 1002.3 |
| 57. | 90017249 | «Ալյուս գրուպ» ՓԲԸ | ք.Ստեփանակերտ | 29913.8 | 5390.0 | 18142.5 | 5302.8 | 1078.5 |
| 58. | 90018886 | «Գնատ» ՍՊԸ | ք.Ստեփանակերտ | 29228.5 | 765.0 | | | 28463.5 |
| 59. | 90018697 | «Արցախ կարի-կոշիկի արտադրական միավորում» ՓԲԸ | ք.Ստեփանակերտ | 29110.8 | 17079.0 | 5500.0 | | 6531.8 |
| 60. | 90070701 | «Վրեժ» ՓԲԸ | գ.Այգեստան | 28893.5 | 2331.3 | 24106.6 | | 2455.6 |
| 61. | 90005352 | «Էներգո» ԱԿ | ք.Ստեփանակերտ | 28543.3 | 5067.2 | 22120.5 | | 1355.6 |
| 62. | 90006038 | «Ջրային տնտեսություն» ՓԲԸ | ք.Ստեփանակերտ | 27990.2 | 3091.7 | 21202.0 | | 3696.5 |
| 63. | 90012812 | «Ստեփանակերտ Սերվիս» ՓԲԸ | ք.Ստեփանակերտ | 27285.1 | 8173.1 | 462.0 | 12600.0 | 6050.0 |
| 64. | 90003072 | «Նվեր» ՍՊԸ | ք.Ստեփանակերտ | 27008.3 | 7609.8 | 15000.0 | 2631.8 | 1766.7 |
| 65. | 90015123 | Ակ.Թախթաջյանի անվան «Բուսաբանական այգի» ՓԲԸ | ք.Ստեփանակերտ | 26858.9 | 3569.0 | 22865.1 | | 424.8 |
| 66. | 90013943 | «Սասուն» ՓԲԸ | ք.Ստեփանակերտ | 26467.2 | 2023.9 | 23847.0 | | 596.3 |
| 67. | 90023765 | «Սեար գրուպ» ՍՊԸ | ք.Ստեփանակերտ | 26262.0 | 694.1 | 1897.3 | | 23670.6 |
| 68. | 90012099 | «Ֆարմսերվիս» ՓԲԸ | ք.Ստեփանակերտ | 25797.1 | 5373.3 | 17431.1 | | 2992.7 |
| 69. | 90070118 | «Վահագն-84» ԱԿ | ք .Ասկերան | 25594.7 | 745.6 | 23726.8 | 186.4 | 935.9 |
| 70. | 90001559 | «Նորայր եւ Հրայր եղբայրներ» ԱԿ | ք.Ստեփանակերտ | 25188.9 | 1725.3 | | | 23463.6 |
| 71. | 90019228 | «Օմեգա գրուպ» ՍՊԸ | ք.Ստեփանակերտ | 25125.0 | 666.8 | 3667.5 | 18195.0 | 2595.7 |
| 72. | 90026704 | «Վերանորոգման, շինարարության տնտեսություն» ՓԲԸ | ք.Ստեփանակերտ | 24451.8 | 7773.0 | 15055.2 | | 1623.6 |
| 73. | 90070246 | «Սևան» ՍՊԸ | գ.Իվանյան | 24417.9 | 2128.9 | 16851.7 | 3163.8 | 2273.5 |
| 74. | 90024733 | «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ Ստեփանակերտի մասնաճյուղ | ք.Ստեփանակերտ | 24273.5 | 15592.9 | 1234.6 | | 7446.0 |
| 75. | 90014336 | «Պրոգրես» ՍՊԸ | ք.Ստեփանակերտ | 24152.9 | 5199.3 | 18183.2 | | 770.4 |
| 76. | 90019476 | «Տեխհանդերձանք» ՍՊԸ | ք.Ստեփանակերտ | 23544.4 | 3830.3 | 17572.3 | | 2141.8 |
| 77. | 90073649 | «Միլանո Էլ .Ջի.» ՍՊԸ | գ.Նորագյուղ | 23039.4 | 325.4 | 10169.6 | | 12544.4 |
| 78. | 90016315 | «Մինիմաքս» ՍՊԸ | ք.Ստեփանակերտ | 22788.8 | 2722.9 | 18698.4 | | 1367.5 |
| 79. | 90009361 | ««Արցախճան» ինստիտուտ» ՓԲԸ | ք.Ստեփանակերտ | 22167.2 | 4509.1 | 16167.6 | | 1490.5 |
| 80. | 90282664 | «Արարատշինտրանս» ՍՊԸ | գ.Այգեստան | 22132.0 | 2829.1 | 18285.7 | | 1017.2 |
| 81. | 90414369 | Բաղդասարյան Արմեն ա/ձ | ք.Ստեփանակերտ | 21763.9 | 784.1 | | | 20979.8 |
| 82. | 90014541 | «Դիզակ պլյուս» ՍՊԸ | ք.Ստեփանակերտ | 21672.9 | 4789.7 | 16223.6 | | 659.6 |
| 83. | 90020724 | «Հիմք» ՍՊԸ | ք.Ստեփանակերտ | 21241.3 | 5681.7 | 14916.1 | | 643.5 |
| 84. | 90280248 | «Աշոտիկ» ՍՊԸ | ք.Հադրութ | 21101.2 | 3351.8 | 15749.0 | 396.5 | 1603.9 |
| 85. | 90001833 | «Արցախփոստ» ՓԲԸ | ք.Ստեփանակերտ | 21066.1 | 8672.1 | 10524.9 | | 1869.1 |
| 86. | 90002519 | «Միրաժ» ԱԿ | ք.Ստեփանակերտ | 20920.6 | 2268.4 | 5972.5 | | 12679.7 |
| 87. | 90025539 | «Ինտերսերվիս» ՍՊԸ | ք.Ստեփանակերտ | 20551.0 | 2745.0 | 16997.0 | | 809.0 |
| 88. | 90018654 | «Ֆլեշ-պլյուս» ՍՊԸ | ք.Ստեփանակերտ | 19737.5 | 2215.0 | 2528.9 | 5731.5 | 9262.1 |
| 89. | 90021261 | «Արաքս Գրուպ» ՍՊԸ | ք.Ստեփանակերտ | 19542.2 | 15171.3 | | | 4370.9 |
| 90. | 90016177 | «Հայաստանի բիզնեսի հիմնադրամ» ՓԲԸ | ք.Ստեփանակերտ | 18758.0 | 17452.0 | | | 1306.0 |
| 91. | 90010207 | «Ջի Էֆ» ՍՊԸ | ք.Ստեփանակերտ | 18679.7 | 4572.3 | 13660.5 | | 446.9 |
| 92. | 90341889 | ԼՂՀ ՔՆ «Վահե Կարապետյան ճանշահագործում» ՓԲԸ | ք.Շուշի | 18576.3 | 3924.0 | 14308.9 | | 343.4 |
| 93. | 90030314 | «Գրանդ քենդի» հայ-կանադական համատեղ ձեռնարկություն ՍՊԸ Արցախի մասնաճյուղ | ք.Ստեփանակերտ | 18468.7 | 593.8 | | | 17874.9 |
| 94. | 90029599 | «Կարմիր Նուռ» ՍՊԸ | ք.Ստեփանակերտ | 17963.4 | 3939.3 | 13679.7 | | 344.4 |
| 95. | 90004685 | «Շինհարթակ» ՓԲԸ | ք.Ստեփանակերտ | 17914.8 | 1749.7 | 15627.0 | | 538.1 |
| 96. | 90025049 | «Էռմի» ՓԲԸ | ք.Ստեփանակերտ | 17821.7 | 5296.6 | 9593.1 | | 2932.0 |
| 97. | 90013807 | «Գոլդ Լայթ» ՍՊԸ | ք.Ստեփանակերտ | 17163.1 | 2506.8 | 14139.2 | | 517.1 |
| 98. | 90021418 | «Պիրամիդա» ՍՊԸ | ք.Ստեփանակերտ | 16865.2 | 2432.2 | 13661.5 | | 771.5 |
| 99. | 90004179 | «Արմինկո-ՆԿ» ՍՊԸ | ք.Ստեփանակերտ | 16697.9 | 2931.7 | 12964.7 | | 801.5 |
| 100. | 90024467 | «Աիմ»ՍՊԸ | ք.Ստեփանակերտ | 16612.5 | 3094.7 | 12966.8 | | 551.0 |

**3 մլն. դրամ և ավելի պարտադիր սոցիալական ապահովության վճար վճարած առաջին 100 ապահովադիրները (առևտրային կազմակերպությունները) և նրանց կողմից ֆինանսական տարվա սկզբից վճարված պարտադիր սոցիալական ապահովության վճարների մեծությունները**

| NN ը/կ | ՀՎՀՀ | Ապահովադրի անվանումը | Ապահովադրի գտնվելու վայրը | 2011թ. վճարված սոցիալական ապահովության վճարների ընդհանուր գումարը (հազ.դրամ) |
|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| 1. | 90016169 | «Բեյզ Մեթըլս» ՓԲԸ | գ.Դրմբոն | 325000,0 |
| 2. | 90015278 | «Ղարաբաղ Տելեկոմ» ՓԲԸ | ք.Ստեփանակերտ | 258967,0 |
| 3. | 90000186 | «Արցախէներգո» ՓԲԸ | ք.Ստեփանակերտ | 193008,0 |
| 4. | 90001386 | «Արցախբանկ» ՓԲԸ | ք.Ստեփանակերտ | 116663,0 |
| 5. | 90002354 | «Հիմնաքար» ՓԲԸ | ք.Ստեփանակերտ | 105986,6 |
| 6. | 90010189 | «Արցախգազ» ՓԲԸ | ք.Ստեփանակերտ | 77202,5 |
| 7. | 90022272 | «Ստեփանակերտի կոնյակի գործարան» ՓԲԸ | ք.Ստեփանակերտ | 55312,8 |
| 8. | 90071281 | «Դորոժնիկ» ՍՊԸ | գ.Այգեստան | 50000,0 |
| 9. | 90002165 | «Վիրաժ» ԱԿ | ք.Ստեփանակերտ | 43603,0 |
| 10. | 90021261 | «Արաքս Գրուպ» ՍՊԸ | ք.Ստեփանակերտ | 40641,3 |
| 11. | 90017188 | «Պանտ» ՍՊԸ | ք.Ստեփանակերտ | 37991,2 |
| 12. | 90008771 | ԼՂՀ ԱՆ «Հանրապետական հիվանդանոց» ՓԲԸ | ք.Ստեփանակերտ | 37268,4 |
| 13. | 90025315 | «Արցախ ՀԷԿ» ԲԲԸ | ք.Ստեփանակերտ | 34425,6 |
| 14. | 90028854 | «Ջրամատակարարում և ջրահեռացում» ՓԲԸ | ք.Ստեփանակերտ | 33595,1 |
| 15. | 90141847 | ԼՂՀ ԱՆ «Ռ.Հ.Բագիյանի անվան Մարտակերտի շրջանային բուժմիավորում» ՓԲԸ | ք .Մարտակերտ | 32840,1 |
| 16. | 90008979 | ԼՂՀ ԱՆ ««Արեւիկ» մանկական բուժմիավորում» ՓԲԸ | ք.Ստեփանակերտ | 29797,0 |
| 17. | 90027001 | «Արցախուղի» ՓԲԸ | ք.Ստեփանակերտ | 28560,0 |
| 18. | 90211894 | ԼՂՀ ԱՆ «Մարտունու շրջանային բուժմիավորում» ՓԲԸ | ք.Մարտունի | 28148,9 |
| 19. | 90016787 | «Սիգմա գրուպ սերվիս» ՓԲԸ | ք.Ստեփանակերտ | 27925,3 |
| 20. | 90008901 | ԼՂՀ «Հանրային հեռուստառադիոընկերություն» ՓԲԸ | ք.Ստեփանակերտ | 27198,0 |
| 21. | 90008763 | ԼՂՀ ԱՆ «Մոր եւ մանկան առողջության պահպանման կենտրոն» ՓԲԸ | ք.Ստեփանակերտ | 26708,2 |
| 22. | 90003442 | «Կապավոր» ՍՊԸ | ք.Ստեփանակերտ | 26215,1 |
| 23. | 90009329 | ԼՂՀ ԱՆ «Արմինե Փակումեանի անվան պոլիկլինիկա» ՓԲԸ | ք.Ստեփանակերտ | 26091,6 |
| 24. | 90018697 | «Արցախ կարի-կոշիկի արտադրական միավորում» ՓԲԸ | ք.Ստեփանակերտ | 24447,0 |
| 25. | 90001833 | «Արցախփոստ» ՓԲԸ | ք.Ստեփանակերտ | 23374,6 |
| 26. | 90002698 | «Արցախկապ» ՓԲԸ | ք.Ստեփանակերտ | 22068,3 |
| 27. | 90025049 | «Էռմի» ՓԲԸ | ք.Ստեփանակերտ | 19504,9 |
| 28. | 90025659 | «Ատրիում» ՍՊԸ | ք.Ստեփանակերտ | 18441,2 |
| 29. | 90026704 | «Վերանորոգման, շինարարության տնտեսություն» ՓԲԸ | ք.Ստեփանակերտ | 17553,6 |
| 30. | 90016752 | «Ճանշին» ՓԲԸ | ք.Ստեփանակերտ | 17138,2 |
| 31. | 90070057 | «Արցախ բրենդի կոմպանի» ՓԲԸ | ք.Ասկերան | 17013,7 |
| 32. | 90025262 | «Արցախ ֆրութ» ՓԲԸ | ք.Ստեփանակերտ | 16697,9 |
| 33. | 90281413 | ԼՂՀ ԱՆ «Հադրութի շրջանային բուժմիավորում» ՓԲԸ | ք.Հադրութ | 16605,8 |
| 34. | 90003261 | «Խաչեն» ՓԲԸ | ք.Ստեփանակերտ | 16449,7 |
| 35. | 90029452 | «Էյ-ի-ջի» ՍՊԸ | ք.Ստեփանակերտ | 15526,7 |
| 36. | 90010282 | «Արցախկաթ» ՓԲԸ | ք.Ստեփանակերտ | 15523,0 |
| 37. | 90017249 | «Ալյուս գրուպ» ՓԲԸ | ք.Ստեփանակերտ | 15511,8 |
| 38. | 90026446 | «Գլոբալշին» ՍՊԸ | ք.Ստեփանակերտ | 15436,8 |
| 39. | 90003863 | «Մեսրոպ Մաշտոց Համալսարան» ՍՊԸ | ք.Ստեփանակերտ | 15319,5 |
| 40. | 90029969 | «Ստեփանակերտի օդանավակայան» ՓԲԸ | ք.Ստեփանակերտ | 15032,3 |
| 41. | 90013144 | «Պետրոլ սերվիս» ՓԲԸ | ք.Ստեփանակերտ | 14825,3 |
| 42. | 90072284 | ԼՂՀ ԱՆ «Ասկերանի շրջանային բուժմիավորում» ՓԲԸ | ք.Ասկերան | 14765,1 |
| 43. | 90143773 | «Մարտակերտի գյուղատնտեսական ծառայություններ» ՓԲԸ | ք .Մարտակերտ | 14746,6 |
| 44. | 90028907 | «Տեխ Շին Ինժիներինգ» ՍՊԸ | ք.Ստեփանակերտ | 13994,9 |
| 45. | 90029993 | «Ագրոտնտեսություն թիվ 1» ՓԲԸ | ք.Ստեփանակերտ | 13717,2 |
| 46. | 90028409 | «Մեքենատրակտորային կայան» ՓԲԸ | ք.Մարտունի | 13611,0 |
| 47. | 90012365 | «Քարավան» ՍՊԸ | գ.Բերքաձոր | 13512,6 |
| 48. | 90013187 | «Ճանշինվերանորոգում» ՓԲԸ | ք.Ստեփանակերտ | 13450,0 |
| 49. | 90029918 | «Ֆ.Դ Սոֆիա» ՍՊԸ | ք.Ստեփանակերտ | 12643,0 |
| 50. | 90000143 | «Արդյունաբերական շինարարական կոմբինատ թիվ 1» ԲԲԸ | գ.Բերքաձոր | 12050,4 |

| 3 մլն. դրամ և ավելի պարտադիր սոցիալական ապահովության վճար վճարած առաջին 100 ապահովադիրները (առևտրային կազմակերպությունները) և նրանց կողմից ֆինանսական տարվա սկզբից վճարված պարտադիր սոցիալական ապահովության վճարների մեծությունները | | | | |
|---|---|---|---|---|
| NN ը/կ | ՀՎՀՀ | Ապահովադրի անվանումը | Ապահովադրի մտնվելու վայրը | 2011թ. վճարված սոցիալական ապահովության վճարների ընդհանուր գումարը (հազ.դրամ) |
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| 51. | 90025307 | «Սուր Նարեկ»ՍՊԸ | ք.Ստեփանակերտ | 11772,3 |
| 52. | 90028063 | «Տեխնո Ֆիտ Շին» ՍՊԸ | ք.Ստեփանակերտ | 11726,7 |
| 53. | 90020879 | «Փերֆեքթ Սետթինգ» ՓԲԸ | ք.Ստեփանակերտ | 11685,2 |
| 54. | 90005051 | «Գրիգոր Նարեկացի» ՍՊԸ | ք.Ստեփանակերտ | 11516,9 |
| 55. | 90020535 | «Աշոտ Երկաթ» ՍՊԸ | ք.Ստեփանակերտ | 11345,7 |
| 56. | 90009361 | «Արցախճան» ինստիտուտ» ՓԲԸ | ք.Ստեփանակերտ | 10970,9 |
| 57. | 90019907 | «Արտադրական կոմբինատ - 3» ՓԲԸ | ք.Ստեփանակերտ | 10792,9 |
| 58. | 90026249 | ԼՂՀ ԳՆ «Տոհմային կայան» ՓԲԸ | ք.Ստեփանակերտ | 10736,5 |
| 59. | 90025323 | «Ազատ Արցախ» ՓԲԸ | ք.Ստեփանակերտ | 10630,0 |
| 60. | 90003237 | «Բերդ» ՍՊԸ | ք.Ստեփանակերտ | 10604,4 |
| 61. | 90008832 | ԼՂՀ ԱՆ «Հոգեթմրաբանական դիսպանսեր» ՓԲԸ | ք.Ստեփանակերտ | 10489,7 |
| 62. | 90009302 | ԼՂՀ ԱՆ «Ստեփանակերտի շտապ բժշկական օգնության կայան» ՓԲԸ | ք.Ստեփանակերտ | 10354,3 |
| 63. | 90022317 | «Գրանդ կոմերց» ՍՊԸ Արցախի մասնաճյուղ | ք.Ստեփանակերտ | 10347,3 |
| 64. | 90030133 | «Բիոտեխնոլոգիա» ՍՊԸ | ք.Ստեփանակերտ | 10269,4 |
| 65. | 90012812 | «Ստեփանակերտ սերվիս» ՓԲԸ | ք.Ստեփանակերտ | 10150,0 |
| 66. | 90212588 | «Լուսակերտ» ՍՊԸ | ք .Մարտունի | 10090,6 |
| 67. | 90015123 | Ակ.Թախթաջյանի անվան «Բուսաբանական այգի» ՓԲԸ | ք.Ստեփանակերտ | 9751,5 |
| 68. | 90006038 | «Ջրային տնտեսություն» ՓԲԸ | ք.Ստեփանակերտ | 9613,0 |
| 69. | 90005352 | «Էներգո» ԱԿ | ք.Ստեփանակերտ | 9401,3 |
| 70. | 90025118 | «Ստրոյ Սիտի» ՓԲԸ | ք.Ստեփանակերտ | 9003,3 |
| 71. | 90016315 | «Մինիմաքս» ՍՊԸ | ք.Ստեփանակերտ | 8713,2 |
| 72. | 90005027 | «Ջրմուղ-Կոյուղի» ՓԲԸ | ք.Ստեփանակերտ | 8500,0 |
| 73. | 90015235 | «Արցախբանկ» ՓԲԸ «Հաղթանակ» մասնաճյուղ | ք.Ստեփանակերտ | 8425,5 |
| 74. | 90002836 | «Էլեկտրոմոնտաժ» ՓԲԸ | ք.Ստեփանակերտ | 8212,5 |
| 75. | 90026928 | «Տեխմոնտաժ» ՍՊԸ | ք.Ստեփանակերտ | 8158,1 |
| 76. | 90008952 | ԼՂՀ ԱՆ «Հակապալարախտային դիսպանսեր» ՓԲԸ | ք.Ստեփանակերտ | 7944,6 |
| 77. | 90015243 | «Արցախբանկ» ՓԲԸ «Վերածնունդ» մասնաճյուղ | ք.Ստեփանակերտ | 7838,1 |
| 78. | 90028183 | «Հորիզոն թրեյդ» ՍՊԸ | ք.Ստեփանակերտ | 7602,9 |
| 79. | 90282605 | «Հաբանդ» ՍՊԸ | գ.Տող | 7595,6 |
| 80. | 90070701 | «Վրեժ» ՓԲԸ | գ.Այգեստան | 7401,3 |
| 81. | 90015251 | «Արցախբանկ» ՓԲԸ «Տիգրանակերտ» մասնաճյուղ | ք.Ստեփանակերտ | 7390,7 |
| 82. | 90024467 | «Աիմ» ՍՊԸ | ք.Ստեփանակերտ | 7372,0 |
| 83. | 90341167 | ԼՂՀ ԱՆ «Շուշիի շրջանային բուժմիավորում» ՓԲԸ | ք.Շուշի | 7268,8 |
| 84. | 90019982 | «Ավան» ՓԲԸ | ք.Շուշի | 7179,9 |
| 85. | 90018095 | «Արդշինինվեստբանկ» ՓԲԸ Ստեփանակերտի մասնաճյուղ | ք.Ստեփանակերտ | 7087,9 |
| 86. | 90012176 | «Վարարակն» ՍՊԸ | ք.Ստեփանակերտ | 7082,7 |
| 87. | 90018654 | «Ֆլեշ-պլյուս» ՍՊԸ | ք.Ստեփանակերտ | 7060,3 |
| 88. | 90073098 | «Սֆինկս» ՓԲԸ | ք.Ստեփանակերտ | 6968,8 |
| 89. | 90015579 | ԼՂՀ ԱՆ «Ինֆեկցիոն հիվանդանոց» ՓԲԸ | ք.Ստեփանակերտ | 6899,8 |
| 90. | 90003056 | «Մեչտա» ԱԿ | ք.Ստեփանակերտ | 6834,6 |
| 91. | 90019529 | «Ջի սթայլ» ՓԲԸ | ք.Ստեփանակերտ | 6452,2 |
| 92. | 90025297 | «Արեգակ» ունիվերսալ վարկային կազմակերպություն Ստեփանակերտի մասնաճյուղ | ք.Ստեփանակերտ | 6360,0 |
| 93. | 90282664 | «Արարատշինտրանս» ՍՊԸ | գ.Այգեստան | 6350,0 |
| 94. | 90004677 | «Սիփան» ՓԲԸ | ք.Ստեփանակերտ | 6344,6 |
| 95. | 90003072 | «Նվեր» ՍՊԸ | ք.Ստեփանակերտ | 6333,6 |
| 96. | 90001559 | «Նորայր եւ Հրայր եղբայրներ» ԱԿ | ք.Ստեփանակերտ | 6229,9 |
| 97. | 90004685 | «Շինհարթակ» ՓԲԸ | ք.Ստեփանակերտ | 6180,4 |
| 98. | 90072731 | «Վարանդա» ՓԲԸ | ք.Ասկերան | 6147,0 |
| 99. | 90000298 | «Ջերմային տնտեսություն» ՓԲԸ | ք.Ստեփանակերտ | 6132,3 |
| 100. | 90019476 | «Տեխհանդերձանք» ՍՊԸ | ք.Ստեփանակերտ | 5861,5 |



***«Դվին» ՍՊԸ-ի հիմնադիր Դավիթ Դաղայան.***

*«Մեր սեփական եկամուտների միջոցով է պետությունը բոլորիս համար կարևոր մի շարք հարցեր կարգավորել: Հետևաբար պարտավոր ենք մեր եկամուտներին համապատասխան մուծումներ կատարել»*

**-Պարոն Դաղայան, Դուք երկար, փորձությունններով լի ճանապարհ եք անցել ընկերության հետ: 10 տարի անց հիշո՞ւմ եք առաջին քայլերը:**

-Անկեղծ ասած, մեկնարկը բավական համեստ և առանց լրացուցիչ գումարդումների էր: Որոշեցինք զբաղվել արտադրությամբ: Գիտակցում էինք ռիսկերը. ի վերջո գյուղատնտեսությունը ռիսկային ուղղություն է, իսկ թռչնաբուծությունը՝ առավել ևս: Բայց դա մեզ հետ չպահեց, և «Դվին»-ը հիմնադրեցինք 2001 թվականին: Սկսել ենք ձվի արտադրությունից և մինչև այսօր հավատարիմ ենք այդ ուղղությանը: Այժմ շուրջ 6 միլիոն ձու ենք արտադրում տարվա կտրվածքով: Սակայն պետք է նշեմ, որ հիմնադրվելուց ի վեր արտադրության ծավալները շատ չեն փոխվել. ավելացել են ընդամենը 20%-ով:

**-Ո՞րն է արտադրության «համեստ» տեմպի պատճառը:**

-Խնդիրն այն է, որ մենք կարող ենք արտադրել միայն այնքան, որքան կարող ենք իրացնել, մանավանդ, որ ձվի պահպանման ժամկետը բավական կարճ է: Նույնքան սահմանափակ են նաև մեր իրացման հնարավորությունները, քանի որ առայժմ բավարարվում ենք արցախյան շուկայով: Հիմնական դժվարություններից մեկն էլ պայմանավորված է ներմուծվող ձվի՝ շուկայում բավական մեծ մասնաբաժին ունենալով: Մյուս պատճառն այն է, որ ձվի պահանջարկը սեզոնային բնույթ է կրում: Այս ամենը նկատի ունենալով՝ մենք ստիպված միջին չափն ենք պահպանում մեր արտադրական ծրագրում՝ չունենալով ավելին արտադրելու և ավելցուկը պահեստավորելու հնարավորություն: Կարևոր է նշել, որ «Դվին»-ի գործունեության 10 տարիների ընթացքում մեզ հետ համագործակցող խանութներից որևէ մեկը մեր արտադրանքը ոչ մի անգամ որակի պատճառով հետ չի վերադարձրել: Բարդությունների առաջ ենք կանգնել նաև մասնագետներ հավաքագրելիս, բայց տարիներ անց այս խնդիրը հարթվել է: Այսօր 22 աշխատող ունի «Դվին»-ը, և 140-ից ավելի աշխատակիցներ՝ «Լուսակերտ»-ը:

> **Սկսել ենք ձվի արտադրությունից և մինչև այսօր հավատարիմ ենք այդ ուղղությանը: Այժմ շուրջ 6 միլիոն ձու ենք արտադրում տարվա կտրվածքով: Հիմնադրվելուց ի վեր արտադրության ծավալները ավելացել են ընդամենը 20%-ով**

**-Հակառակ դժվարություններին՝ գործունեության նոր ոլորտում ընդգրկվեցիք՝ առաջինից քիչ տարբերվող: Աշխատանքները դադարեցրած «Լուսակերտ» թռչնաբուծական ֆաբրիկան կրկին սկսեց աշխատել:**

-Այո՛, երկրի ղեկավարության աջակցությամբ վարկային միջոցներ հատկացվեցին, և ես ձեռնամուխ եղա այդ արտադրության վերակենդանացմանը: Այսպիսով՝ 2011 թվականին Ասկերանի շրջանի Նորագյուղ համայնքում ձվի արտադրությանը զուգահեռ սկսեցինք հավի մսի արտադրությունը Մարտունու շրջանում: Այս պահին արտադրում ենք տարեկան շուրջ 600 տոննա միս: Բնականաբար, սա արցախյան շուկայի համար մեծ ծավալ է, հետևաբար տեղական շուկայում իրացնում ենք մեր արտադրած մսի միայն 20%-ը, իսկ 80%-ն արտահանում ենք Հայաստանի

www.tax.nk.am ■ թեժ գիծ (+374 47) 974-758

Հանրապետություն: Եթե տեղական շուկայում դժվարությամբ ենք մրցակցում ներմուծված մսի հետ, ապա հայաստանյան շուկայում մրցակցությունն ավելի խիստ է. կրկին սպառման հետ կապված խնդիրներ են ծագում: Ինչ վերաբերում է կերին, հացահատիկի ողջ պաշարը լրացնում ենք տեղում (այս տարի արդեն սկսել ենք գործընթացը): Իսկ կերի այլ բաղադրիչներ ստիպված ենք ներմուծել ՀՀ-ից կամ այլ երկրներից, քանի որ դրանք մեզ մոտ չեն արտադրվում:

**-Արցախի հարկային դաշտում աշխատելիս դժվարություններ առաջանո՞ւմ են:**

-ԼՂՀ-ում գործում են բավական արտոնյալ դրույքաչափեր, սակայն մարդիկ, հատկապես գործարարները, միշտ էլ ուզում են ավելին ունենալ: Նույնն էլ հարկային դաշտի դեպքում. ցանկանում ենք ավելի շատ արտոնություններ, ավելի մեղմ դրույքաչափեր և այսպես շարունակ: Սակայն մի պահ մտածելուց հետո հասկանում ենք, որ մեր սեփական եկամուտների միջոցով է պետությունը բոլորիս համար կարևոր մի շարք հարցեր կարգավորել: Հետևաբար պարտավոր ենք մեր եկամուտներին համապատասխան մուծումներ կատարել:

**2011 թվականին Ասկերանի շրջանի Նորագյուղ համայնքում ծվի արտադրությանը զուգահեռ արտադրությունը սկսեցինք հավի մսի արտադրությունը: Այս պահին արտադրում ենք տարեկան շուրջ 600 տոննա միս**

# ՁՎԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆԻՑ ՄԻՆՉԵՎ ԹՌՉՆԱԲՈՒԾՈՒԹՅՈՒՆ

## «Դվին»-ի 10 տարվա կենսագրությունն է

**2001** թվականից Արցախի տնտեսական դաշտում գործում է «Դվին» ՍՊԸ-ն: 2011-ին ընկերությունն արդեն 10 տարվա պատմություն է թողել անցյալում: Իսկ թե ինչ ձեռքբերումներ ու դժվարություններ է ունեցել այդ տարիներին՝ ընկերության հիմնադիր Դավիթ Դադայանն է պատմել: Ի դեպ, նա «Արցախի գործարարների/գործատուների/ միություն» իրավաբանական անձանց միության խորհրդի նախագահն է:









***Գիշի գյուղի մենատնտես Արարատ Բաղդյան.***

*«Արցախի բնակլիմայական պայմանները նպաստավոր են ջայլամաբուծության համար, և մոտ ապագայում այն հեռանկարային ու եկամտաբեր ճյուղ կդառնա»*

# ԹՌՉՆԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՏԵՍԱԿ՝ ԱՐՑԱԽՈՒՄ

## Ջայլամաբուծությունը լավ հեռանկար է խոստանում

**Աֆրիկյան ջայլամները ևս մեկ բնակավայր են ունենալու: Արցախն առաջին քայլերն է անում ջայլամաբուծության ոլորտում՝ հետևելով ՀՀ օրինակին: Անասնաբուծության՝ Արցախի համար նոր այս ճյուղում իր ուժերն է որոշել փորձել Մարտունու շրջանի Գիշի գյուղի մենատնտես Արարատ Բաղդյանը: Նա մինչ այսօր ունեցած հաջողությունների նաև անխուսափելի դժվարությունների մասին պատմել է «Հարկատու»-ին:**

**-Պարոն Բաղդյան, ինչո՞ւ որոշեցիք զբաղվել հենց ջայլամաբուծությամբ:**

-Բնավորությամբ լինելով պրպտող ու նախաձեռնող մտածում էի զբաղվել այնպիսի գործով, որը կլիներ հետաքրքիր և միաժամանակ նոր: Որոշեցի ընտրել թռչնաբուծության որևէ հեռանկարային ճյուղ: Այդ բնագավառում մարդկային մտքի նոր նվաճումներն ուսումնասիրելիս էլ հղացավ ջայլամաբուծությամբ զբաղվելու գաղափարը: Թեև դրա իրագործումն Արցախում առաջին հայացքից անիրատեսական էր թվում՝ սկսեցի առավել մանրամասն ուսումնասիրել գործի առանձնահատկությունները: Խոստովանում եմ՝ ինձ հատկապես գերեց մեր երկրամասում ջայլամաբուծության զարգացման համար բավական նպաստավոր պայմանների առկայությունը, և մտածեցի՝ ինչու չլինել առաջինը:

**-Ինչպե՞ս կյանքի կոչեցիք գաղափարը:**

-Սկսելու համար անհրաժեշտ էին շենք և համապատասխան պայմաններ: Երկար որոնումներից հետո համոզվեցի, որ գոյություն ունեցող հին ենթակառուցվածքները չեն համապատասխանում պահանջվող չափանիշներին, ուստի որոշեցի կառուցել նորը՝ պատկերացնելով այդ հսկա կենդանիների կենսակերպի առանձնահատկությունները: Զուգահեռաբար հետաքրքրվում էի ջայլամներ ձեռք բերելու հնարա-

www.tax.nk.am ■ թեժ գիծ (+374 47) 974-758





վորությամբ: Երբ այդ հարցը լուծվեց, սկսեցի շինարարական աշխատանքները: Բավական հաջող կարգավորվեց նաև թռչունների ներմուծման հարցը: Քենիայի Հանրապետությունից միջնորդությամբ ձեռք բերեցինք ջայլամի երեք ամսական ձտեր:

**-Սկզբնական շրջանում ի՞նչ դժվարություններ են եղել:**

-Սա նորույթ էր Արցախի համար և բավական ռիսկային անձամբ ինձ համար: Սկզբնական շրջանում հատկապես համապատասխան մասնագետների բացակայության պատճառով դժվար էր խնամքի և կերակրման պահանջվող չափանիշներն ապահովելը: Առաջնորդվում էինք ձեռքի տակ եղած գրականությամբ: Շուտով բացահայտեցինք, որ լավ կերակրելու և խնամելու դեպքում ջայլամները շատ արագ են մեծանում(օրինակ՝ 6 ամսական ճուտը մինչև 50կգ քաշ ունի): Դժվար էր նաև ջայլամներին տեղի բնակլիմայական պայմաններին հարմարեցնելը: Անհրաժեշտ էր զինվել համբերությամբ և հոգատարությամբ: Ներկա դրությամբ կարող ենք ասել, որ ջայլամները հարմարվել են տեղական պայմաններին, սակայն պատասխանը միանշանակ կլինի, երբ հետևում մնան ցուրտ եղանակները: Իմ համոզմամբ Արցախի բնակլիմայական պայմանները նպաստավոր են ջայլամաբուծության համար, և մոտ ապագայում այն հեռանկարային ու եկամտաբեր ճյուղ կդառնա:

**-Նշեցիք, որ սկզբնական շրջանում մասնագետի պակաս կար: Արդյոք այսօր խնդիրը լուծվա՞ծ է:**

-Հանդիպելով բազում դժվարությունների՝ սեփական փորձով համոզվել եմ, որ երկրում գործարարության զարգացման նախապայմաններից մեկը համապատասխան մասնագետների առկայությունն է: Ընդ որում, անհրաժեշտ է անընդհատ թարմացնել և զարգացնել նրանց ունակություններն ու գիտելիքները՝ հարմարեցնելով ժամանակի հրամայականին: Այսօր մեր աշխատակիցներն ինքնուրույն կատարելագործում են իրենց հմտությունները՝ աշխատանքի ընթացքում սովորելով, բացահայտելով գործի նրբությունները, կիրառելով նաև հայաստանյան և արտասահմանյան գործընկերների փորձը:

**-Ինչպե՞ս եք հայթայթում կերը:**

-Այս առումով մտահոգվելու խնդիր չկա. ջայլամները հիմնականում սնվում են տեղական արտադրության համակցված կերով, ծառի տերևներով, թփերով ու միջատներով: Հետևաբար կերի մի մասն ապահովում ենք տեղում, մյուս մասը ձեռք ենք բերում հայաստանյան շուկայից: Ըստ գիտական մեկնաբանության՝ «ջայլամ»-ը հունարենից թարգմանվում է

**Մեր ձեռնարկումն ընդամենն ինն ամսվա պատմություն ունի, և արդյունքների մասին խոսելը դեռևս վաղ է: Միջազգային լավագույն փորձը ցույց է տալիս, որ ճյուղի արդյունավետությունը երևում է 3 տարի անց միայն: Այսօր վստահաբար կարող եմ ասել, որ ծրագրի առաջին փուլն արդեն իրականություն է դարձել: Մեր տնտեսությունն ունի և՛ բացօթյա տարածք՝ ցերեկային զբոսանքի համար, և՛ փակ՝ անբարենպաստ եղանակից պաշտպանվելու համար: Երկուսն էլ հագեցած են անհրաժեշտ ենթակառուցվածքներով և նախատեսված են ջայլամների ողջ գլխաքանակի կերն ու խնամքն ապահովելու համար: Իհարկե, դեռ չենք հասել այն հիմնական նշաձողին, որից հետո կկարողանանք Արցախում ջայլամներ բազմացնել**









**Ջայլամաբուծության արտադրանքը էկոլոգիապես մաքուր, առանց խոլեստերինի միսը, սննդարար ձուն և բուժիչ յուղն են: Օգտագործվում են անգամ փետուրները, կաշին և ոսկորները հագուստի, կոշիկի և կենցաղային իրերի արտադրության մեջ: Ջայլամի միսը, ձուն և ֆոսֆորով հարուստ ոսկրափոշին արժեքավոր են հոդացավերի, սրտանոթային և աղեստամոքսային հիվանդությունների բուժման համար: Սրանք մեծ պահանջարկ են վայելում միջազգային շուկայում, որտեղ ջայլամի ձվի գինը 40-50 դոլար է, իսկ 1կգ փետուրն արժե 50-60 դոլար: Այնուամենայնիվ, նախատեսում ենք այս անսովոր արտադրանքով ներկայանալ նախ և առաջ արցախյան և հայաստանյան սպառողին:**

«ճնճղուկ-ուղտ»: Դրանով է բացատրվում այն, որ վերջինիս կերային բազայում կան թե՛ թռչունների և թե՛ կենդանիների սննդակազմին բնորոշ բաղադրիչներ:

**-Ի՞նչ արտադրանք է ստացվելու արդյունքում, և որտե՞ղ է նախատեսվում սպառել այն:**

-Ջայլամաբուծության արտադրանքը էկոլոգիապես մաքուր, առանց խոլեստերինի միսը, սննդարար ձուն և բուժիչ յուղն են: Օգտագործվում են անգամ փետուրները, կաշին և ոսկորները հագուստի, կոշիկի և կենցաղային իրերի արտադրության մեջ: Ջայլամի միսը, ձուն և ֆոսֆորով հարուստ ոսկրափոշին արժեքավոր են հոդացավերի, սրտանոթային և աղեստամոքսային հիվանդությունների բուժման համար: Սրանք մեծ պահանջարկ են վայելում միջազգային շուկայում, որտեղ ջայլամի ձվի գինը 40-50 դոլար է, իսկ 1կգ փետուրն արժե 50-60 դոլար: Այնուամենայնիվ, նախատեսում ենք այս անսովոր արտադրանքով ներկայանալ նախ և առաջ արցախյան և հայաստանյան սպառողին:

**-Առաջին արդյունքներն արդեն կա՞ն, որոնք թույլ կտան խոսել ծրագրի արդյունավետության մասին:**

-Մեր ձեռնարկումն ընդամենն ինն ամսվա պատմություն ունի, և արդյունքների մասին խոսելը դեռևս վաղ է: Միջազգային լավագույն փորձը ցույց է տալիս, որ ծրագրի արդյունավետությունը երևում է 3 տարի անց միայն: Այսօր վստահաբար կարող եմ ասել, որ ծրագրի առաջին փուլն արդեն իրականություն է դարձել: Մեր տնտեսությունն ունի և՛ բացօթյա տարածք՝ ցերեկային զբոսանքի համար, և՛ փակ՝ անբարենպաստ եղանակից պաշտպանվելու համար: Երկուսն էլ հագեցած են անհրաժեշտ ենթակառուցվածքներով և նախատեսված են ջայլամների ողջ գլխաքանակի կերն ու խնամքն ապահովելու համար: Իհարկե, դեռ չենք հասել այն հիմնական նշաձողին, որից հետո կկարողանանք Արցախում ջայլամներ բազմացնել:

**-Տնտեսությունն ընդլայնելու հեռանկար տեսնո՞ւմ եք:**

-Նման մտադրություն կա: Դրա համար անհրաժեշտ կլինի ապագայում ընդլայնել տարածքը, ձեռք բերել սարքավորումներ՝ վերարտադրության անընդհատությունն ապահովելու նպատակով: Այս ամենի համար կպահանջվեն ֆինանսական միջոցներ և քրտնաջան աշխատանք:

Բոլոր հարցերն
ունեն իրենց
պատասխանները՝

**www.tax.nk.am**




***«Բեյզ Մեթըլս» ՓԲԸ տնօրեն Արթուր Մկրտումյան.***

*«Կարող եմ վստահեցնել, որ այս 10 տարվա ընթացքում շրջակա միջավայրը չի տուժել մեր գործունեության հետևանքով: Ընկերության սեփականատերերը մեծ տեղ են տալիս բնության պահպանությանը՝ թեև դա ծախսատար է»*

# ԼՂՀ ՀԱՆՔԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ 10 ՏԱՐԵԿԱՆ Է

## «Բեյզ Մեթըլս»՝ Արցախի ընդերքի գիտակ

Հանրապետության թիվ մեկ հարկատուն՝ «Բեյզ Մեթըլս»-ը, 10 տարեկան է: ԼՂՀ լեռնահանքարտադրության ոլորտի միակ ընկերությունը տասնամյա գործունեության ընթացքում հասցրել է ուսումնասիրել Արցախի բնական հարստությունները և հակառակ հասկանալի դժվարություններին՝ կայանալ: Այն ստորգետնյա հանքից արդյունահանում է տարեկան 350հազ. տոննա հանքաքար: Ընկերությունը նախատեսում է զբոսաշրջային խոշոր համալիր ստեղծել ներկա պահին շահագործվող ենթակառուցվածքների հիման վրա, երբ օգտակար հանածոների արդյունաբերական պաշարները սպառվեն: Այդպիսով կնպաստի տարածաշրջանում զբոսաշրջության՝ հատկապես էկոտուրիզմի զարգացմանը:

**-Պարոն Մկրտումյան, որպես Արցախում երկար տարիներ աշխատած գործարար՝ ո՞րն եք համարում տարվա ձեռքբերումը երկրի համար:**

-Սա Արցախի համար կայուն զարգացման ևս մեկ տարի էր: Դա են հուշում հանրապետության տնտեսական կյանքը բնութագրող հիմնական ցուցանիշները: Սակայն ամենակարևորն այն է, որ 2011-ը խաղաղության ևս մեկ տարի էր, ինչը հնարավորություն տվեց շարունակելու բարեփոխումները երկրի կյանքի տարբեր ոլորտներում՝ լրացուցիչ պայմաններ ստեղծելով նաև տնտեսական զարգացման համար: Իսկ տարվա ամենահիշարժան իրադարձությունն այն էր, որ տոնեցինք Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 20-ամյակը:

**-Ինչպիսի՞ն էր 2011-ը ընկերության համար:**

-Տարին կարելի է հաջողված համարել: Տարվա կտրվածքով ընկերության համախառն արտադրանքը կազմել է 17մլրդ 800մլն դրամ, պետբյուջե ենք մուծել մոտ 5մլրդ դրամ, վճարել 3մլրդ դրամ աշխատավարձ: Համեմատության համար ասեմ, որ 2003-ին, երբ սկսվեցին ընկերության կանոնավոր աշխատանքները, «Բեյզ Մեթըլս»-ն ընդամենը 471 աշխատակից ուներ, թողարկել էր 789մլն դրամի համախառն արտադրանք և պետբյուջե մուծել 197մլն դրամ: Սակայն իմ կարծիքով կարևոր է մեկ այլ ցուցանիշ. գործունեությունն սկսելուց մինչև այսօր ընկերությունն իրականացրել է ավելի քան 85մլն դոլարի ներդրում:

**-«Բեյզ Մեթըլս»-ը մասնավոր նախաձեռնությունների շարքում դեռևս ամենախոշորն ու արդյունավետն է այսօր: Գործունեությունն սկսելիս ունեի՞ք նման ակնկալիք:**

-2012-ին լրանում է «Բեյզ Մեթըլս»-ի գործունեության տասնամյակը: Ընկերության սեփականատերն ու ղեկավարը նպատակադրվել էին գործունեություն ծավալել Արցախում 2002-ին՝ հակառակ նրան, որ այս տարածաշրջանը դեռ ընդունված էր համարել ռիսկային գոտի: Աշխատանքները պետք է կատարվեին լեռնահանքային արդյունաբերության ոլորտում: Որոշել էինք սկսել Դրմբոնից, որն աչքի էր ընկնում իր հարուստ հանքաքարով: Ռիսկեր, իհարկե, կային և այսօր էլ կան: Բայց, կարծում եմ, դրանք լիովին փոխհատուցվում են այն ուշադրությամբ և ըմբռնողականությամբ, որ մենք այս բոլոր տարիներին զգացել ենք Արցախի ժողովրդի և իշխանության կողմից: Տարիների ընթացքում մեր ընկերությունն անընդհատ աճ է ունեցել բոլոր ուղղություններում՝ արտադրություն, արտահանման ծավալներ, աշխատակիցների թիվ և պետբյուջե վճարած հարկեր: Որոշակի դժվարություններ ենք ունեցել համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի տարիներին(2008-2009թթ.), բայց արդեն հասցրել ենք չեզոքացնել այդ տարիների բացասական հետևանքները:

**-Առաջին քայլերն անելիս ի՞նչ խնդիրներ կային, որ հաղթահարել եք:**

-Դժվարությունների մասին որոշակի պատկերացում ունեինք նախքան աշխատանքների մեկնարկը: Մենք պետք է խոշոր ձեռնարկություն հիմնեինք այնտեղ, որտեղ մինչ այդ նման աշխատանք չէր արվել: Անհրաժեշտ էր ամեն ինչ սկսել զրոյից: Ընդ որում, խոսքը միայն շենք-շինությունների կառուցման և անհրաժեշտ սարքավորումների ներմուծման, տեղադրման մասին չէր. պետք է ճանապարհներ կառուցեինք, ջրամատակարարումն ու էլեկտրամատակարարումն ապահովեինք: Այդ ամենը հաջողվեց իրագործել ընդամենը 13 ամսվա ընթացքում: Դա նման ծավալի աշխատանքների համար ռեկորդային կարճ ժամանակ է: Մեծ ջանքերի գնով 2003-ին ընկերությունն սկսեց կանոնավոր աշխատել:




**Արցախում մենք շատ ավելի երկարաժամկետ ծրագրեր ունենք: Արդյունքները մեզ հիմք են տալիս վստահեցնելու, որ առաջիկա 2-3 տարվա ընթացքում կավարտենք արտադրական ևս մեկ հզոր կառույցի շինարարությունը: Ավելի պատկերավոր ներկայացնելու համար պարզապես նշեմ, որ նույնիսկ միայն առաջին փուլում այստեղ իրականացվելիք աշխատանքների ծավալները Դրմբոնի այսօրվա հնարավորությունները կգերազանցեն 6-8 անգամ**

**-Հանքագործությունը՝ որպես մասնագիտություն, նորություն էր արցախցիների համար: Ինչպե՞ս լրացրեցիք մասնագետների պակասը:**

-Չթերագնահատելով արտադրամասի կառուցման, ժամանակակից սարքավորումներով վերազինելու, ջրամատակարարման համակարգեր և ճանապարհներ կառուցելու կարևորությունը՝ պետք է նշեմ, որ այս տարիներին Արցախում

ընկերության ամենամեծ ձեռքբերումը կարգապահ, արհեստավարժ և ամուր աշխատանքային կոլեկտիվի ձևավորումն է: Անկեղծ ասած, սկզբում մտավախություն ունեինք, սակայն հենց առաջին շաբաթների ընթացքում մեզ հաջողվեց մասնագետների մի խումբ հավաքագրել, որի շուրջն էլ հետագա ամիսների ընթացքում ձևավորվեց աշխատակիցների հիմնական կորիզը: Դա շարունակական գործընթաց է. այսօր էլ մասնագետների պատրաստումն ու վերապատրաստումը մեր ուշադրության կենտրոնում են: Նշեմ, որ 2011-ին ունեցել ենք 1200 աշխատող, որից 80-85 տոկոսը՝ տեղացի:



**-Այս առումով կրթական համակարգի հետ համագործակցությունն արդյունավե՞տ է:**

-Մասնագետներ պատրաստելու հարցում զգալի աջակցություն ենք ստանում բուհերից: Կառանձնացնեմ համագործակցությունը Արցախի պետական համալսարանի հետ: Տարբեր մասնագիտությունների մագիստրոսներից խումբ ենք հավաքագրում և անցկացնում համատեղ ուսուցման կուրս: Ծրագրի մի մասն անցկացվում է հենց «Բեյզ Մեթըլս»-ում: Այդ ժամանակահատվածում ներառվում են թե՛ տեսական, թե՛ գործնական պարապմունքներ, որոնք անցկացվում են արտադրությունում: Վստահ ենք՝ այդ կերպ բավական ամուր հիմքեր կապահովենք՝ հետագայում լուրջ համալրում ունենալու համար:

**-«Բեյզ Մեթըլս»-ը բազմաթիվ բարեգործություններ է արել: Որո՞նք են եղել գերակա ուղղությունները:**

-Տարբերակում սովորաբար չենք դնում: Օժանդակություն իրականացնելիս ելնում ենք անհրաժեշտությունից: Օրինակ՝ Ստեփանակերտում հիմնովին նորոգել ենք մի մանկապարտեզ: Պարբերաբար աջակցում ենք մշակութային, մարզական տարաբնույթ միջոցառումների անցկացմանը: Մշտապես օգնում ենք սոցիալապես անապահով խմբերին, առանձին անհատներին՝ ուսման կամ բուժման վճարների հարցերում: Ունենք նաև, այսպես ասած, ավանդական ուղղություններ. տարեկան մոտ 240հազ. դոլար ենք հատկացնում «Արցախի ազատամարտիկների միությանը» և շուրջ 200հազ. դոլար՝ «Հայաստան» համահայկական հիմնադրամի ամենամյա դրամահավաքին: Ընդհանուր առմամբ, ընկերությունն Արցախում գործունեության մեկնարկից մինչև 2012-ն ավելի քան 1մլրդ 500մլն դրամ է հատկացրել բարեգործական նպատակներով:

**-Ընկերության գործունեությունից շահում է տնտեսությունը: Չի՞ տուժում արդյոք շրջակա միջավայրը:**

-Ընդերքի օգտագործումը ենթադրում է նաև շրջակա միջավայրի վրա որոշակի ազդեցություն, որի չափն է վճռորոշ: Մեր գլխավոր խնդիրը թույլատրելի սահմանը չանցնելն է: Կարող եմ վստահեցնել, որ այս 10 տարվա ընթացքում շրջակա միջավայրը չի տուժել մեր գործունեության հետևանքով: Ընկերութ-

յան սեփականատերերը մեծ տեղ են տալիս բնության պահպանությանը՝ թեև դա ծախսատար է: Գործածում ենք արտադրական ջրերի փակ շրջանառության տեխնոլոգիա: Ի դեպ, մեզ մոտ կիրառվող շատ տեխնոլոգիաներ նորույթ են անգամ Հայաստանի համար: Ընդ որում, արտադրությունն ընդլայնելիս՝ մենք օգտագործում ենք հենց տվյալ պահի նորույթները: 2011-ին ավարտել ենք ոսկու կորզման նոր գործարանի շինարարությունը: Դա թույլ կտա օգտակար մասն առանձնացնել թափոնային պոչանյութից, ինչը նախկին տեխնոլոգիաներով հնարավոր չէր:

**-Խոսակցություն կա, թե Դրմբոնում պաշարներն անսպառ չեն: Ի՞նչ եք ծրագրում ապագայի համար:**

-Այո՛, դա փաստ է, և մենք չենք թաքցնում: Դրմբոնի հանքավայրի պաշարները կբավականեցնեն դեռ 4-5 տարի այնտեղ աշխատելու համար: Բնականաբար, Արցախում մենք շատ ավելի երկարաժամկետ ծրագրեր ունենք: Այստեղ գործելու ողջ ընթացքում մենք իրականացրել ենք երկրաբանա-հետախուզական լայնամասշտաբ աշխատանքներ: Դրանց արդյունքները մեզ հիմք են տալիս վստահեցնելու, որ առաջիկա 2-3 տարվա ընթացքում կավարտենք արտադրական ևս մեկ հզոր կառույցի շինարարությունը: Ավելի պատկերավոր ներկայացնելու համար պարզապես նշեմ, որ նույնիսկ միայն առաջին փուլում այստեղ իրականացվելիք աշխատանքների ծավալները Դրմբոնի այսօրվա հնարավորությունները կգերազանցեն 6-8 անգամ:



**Նախորդ տարին կարելի է հաջողված համարել: Տարվա կտրվածքով ընկերության համախառն արտադրանքը կազմել է 17մլրդ 800մլն դրամ, պետբյուջե ենք մուծել մոտ 5մլրդ դրամ, վճարել 3մլրդ դրամ աշխատավարձ: Համեմատության համար ասեմ, որ 2003-ին, երբ սկսվեցին ընկերության կանոնավոր աշխատանքները, «Բեյզ Մեթըլս»-ն ընդամենը 471 աշխատակից ուներ, թողարկել էր 789մլն դրամի համախառն արտադրանք և պետբյուջե մուծել 197մլն դրամ: Սակայն իմ կարծիքով կարևոր է մեկ այլ ցուցանիշ. գործունեությունն սկսելուց մինչև այսօր ընկերությունն իրականացրել է ավելի քան 85մլն դոլարի ներդրում**

**-Նշանակում է՝ 4-5 տարի հետո Դրմբոնում կդադարեցվե՞ն աշխատանքները:**

-Ընդհակառակը, այստեղ աշխատանքների ծավալները կարող են անգամ մեծանալ: Դրմբոնում մենք կվերամշակենք այլ հանքավայրերից բերված հանքաքար: Խոսքն առաջին հերթին Դրմբոնից ընդամենը մի քանի կիլոմետր հեռու գտնվող Մեհմանայի հանքավայրի մասին է: Վերջինիս հնարավորությունները հաշվի առնելով՝ կարող ենք վստահ լինել, որ աշխատանքներն այստեղ կշարունակվեն ևս մի քանի տասնամյակ: Բացի այդ, այստեղ գործելու է ոսկու կորզման գործարանը: Այս ամենը հաշվի առնելով՝ Դրմբոնի ապագան արդյունաբերության այս ճյուղի հաշվարկով բավական հուսալի է երևում:

**-Իշխանությունը հայտնել է՝ լեռնահանքային արդյունաբերության ոլորտում ծրագրերը բազմաթիվ են լինելու: Ի՞նչ դեր կունենա դրանցում «Բեյզ Մեթըլս»-ը:**

-Լեռնահանքային արդյունաբերությունը, իսկապես, տնտեսության այն ճյուղերից է, որի զարգացումը կարող է մեծապես օժանդակել մյուս ճյուղերի զարգացմանը նաև ուղղակի և անուղղակի ձևով ազդել բնակչության սոցիալական վիճակի վրա: Սա արտաքին աշխարհի հետ մշտապես կապի մեջ լինելու լավագույն հնարավորություններից է նաև: Նշածս ծրագրերի իրագործումից հետո մեր ընկերությունը կունենա 3-4 հազար մշտական աշխատատեղ՝ բարձր աշխատատավարձով: Համապատասխանաբար կաճեն նաև պետբյուջե կատարվելիք վճարումները, և դա շարունակական կլինի:

**-Քանի որ այս ոլորտը կապված է արտաքին շուկայի հետ, որքանո՞վ է «Բեյզ Մեթըլս»-ն ապահովագրված հավանական ճգնաժամային իրավիճակից:**

-Միակ ելքն աշխատանքներն առավելագույն արդյունավետությամբ կազմակերպելն է: 2008-2009-ի ճգնաժամը բացահայտեց մեր թույլ կողմերը(այն ժամանակ շատերն էին անպատրաստ): Բայց անգամ այդ դժվարին շրջանում մեզ հաջողվեց խուսափել կրճատումներից: Այնպես որ, արդեն որոշակի փորձ ունենք: Կարող եմ վստահեցնել, որ այսօր «Բեյզ Մեթըլս»-ն ավելի պատրաստ է շուկայի անակնկալներին, քան 2008 թվականին:

www.tax.nk.am ■ թեժ գիծ (+374 47) 974-758



***«Ղարաբաղ Տելեկոմ» ՓԲԸ գլխավոր տնօրեն Ռալֆ Յիրիկյան.***

*«Ուրախ ենք գիտակցել, որ տասը տարիների ընթացքում մեզ հաջողվել է հասնել մեծ արդյունքների և մեր ներդրումն ունենալ ԼՂՀ զարգացման գործում»*

**-«Ղարաբաղ Տելեկոմ»-ը ԼՂՀ մուտք գործած առաջին խոշոր կազմակերպություններից է: Ի՞նչ ձեռքբերումներով է նշանավորվել ընկերության տասնամյա գործունեությունը:**

-Ուրախ ենք գիտակցել, որ տասը տարիների ընթացքում մեզ հաջողվել է հասնել բավական մեծ արդյունքների և մեր ներդրումն ունենալ ԼՂՀ զարգացման գործում: Այս ընթացքում կառուցել ենք բջջային հեռախոսակապի ցանց, տեղադրել բջջային բազային նոր կայաններ, որոնց շնորհիվ հանրապետության ամբողջ տարածքը ցանցային ծածկույթով է ապահովվել: Այսօր մենք հպարտությամբ հայտնում ենք, որ հաղթահարելով բոլոր դժվարությունները՝ կարողացել ենք Արցախի տարածքի 95%-ն ապահովել բջջային հեռախոսակապով: Մեր բաժանորդները հնարավորություն ունեն իրենց հեռախոսահամարներով հասանելի լինել աշխարհի գրեթե բոլոր ծայրերում:

**-Վերջին տարիներին հաջողությունները ընկերության գործունեության նոր ոլորտներո՞ւմ են նաև եղել:**

-Իհարկե, քանի որ մենք սիրում ենք ամեն ինչ լավ անել: Վերջին 2 տարվա ընթացքում հատկապես մեծ ուշադրություն ենք դարձրել ինտերնետ կապին: Կառուցելով օպտիկամանրաթելային ցանց Գորիսից մինչև Ստեփանակերտ և ձեռք բերելով համապատասխան սարքավորումներ՝ զգալիորեն բարձրացավ ինտերնետ կապի որակը և միաժամանակ ավելի մատչելի դարձավ բնակչության համար: Բացի այդ, ընդլայնվեց սպասարկման կենտրոնների ցանցը, և այժմ ԼՂՀ տարածքում գործում է 41 սպասարկման կենտրոն: Նշեմ նաև, որ մեր ընկերությունը մասնակցել և շարունակում է մասնակցել երկրի սոցիալական ապահովության,

Արտաքին աշխարհի հետ Արցախի անմիջական կապը 10 տարի ապահովում է «Ղարաբաղ Տելեկոմ» ՓԲԸ-ն: Յամարձակվելով մուտք գործել Արցախի տնտեսական անկայուն դաշտ՝ ընկերությանը հաջողվել է իրականացնել տարբեր ծրագրեր՝ ընդլայնելով և արդիականացնելով ԼՂՅ-ում հեռահաղորդակցության համակարգը: Այն բարձրորակ սարքավորումներով Արցախում ստեղծել և զարգացրել է բջջային(GSM) համակարգն ու ինտերնետ ծառայությունը: Գործունեության 10 տարիների ընթացքում «Ղարաբաղ Տելեկոմ»-ը կայացել է որպես միջազգային չափանիշներին համապատասխանող հեռահաղորդակցության միակ ընկերություն ԼՂՅ-ում: Բայց սա դեռ սկիզբն է համարում, հետևաբար շարունակելու է հավատարիմ մնալ «Միշտ հասանելի» նշանաբանին:

# ՅԵՌԱՅԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ

## ՆՈՐ ՈՐԱԿ 10 ՏԱՐԻՆԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ

### «Ղարաբաղ Տելեկոմ»՝ կամուրջ Արցախի և ողջ աշխարհի միջև

կրթության, մշակույթի և առողջապահության ոլորտների զարգացմանը: Արցախի ժողովրդի համար հնարավորինս հասանելի լինելը և նրա պահանջներին բավարարելը պետք է համարել մեր գլխավոր ձեռքբերումը:

**-2011-ը «Ղարաբաղ Տելեկոմ»-ի համար հարուստ էր փոփոխություններով: Սակագնային քաղաքականության մեջ ի՞նչ փոխվեց:**

-Վերանայեցինք ինտերնետ ծառայության սակագները, որոնք արդյունքում իջան մոտ 40 անգամ: Սակագնային նոր քաղաքականությունն իր ազդեցությունն ունեցավ նաև բջջային, ֆիքսված և անլար ֆիքսված հեռախոսակապի ծառայությունների շուկայի վրա: 2010-ի դեկտեմբեր ամսից սկսած 3 անգամ իջեցրինք հեռախոսակապի սակագները, միջազգային զանգերինը՝ մինչև 80%:

**-Ծառայությունները մատչելի դարձնելուց բացի, որակական փոփոխություն եղե՞լ է:**

-Անշուշտ, «Ղարաբաղ Տելեկոմը» աշխատում է նաև որակի բարելավման ուղղությամբ: Գլխավոր առաջընթացն այն է, որ ընկերությունը հաջողությամբ քայլեր է ձեռնարկել շրջկենտրոններում և մի շարք գյուղերում ինտերնետ կապ միացնելու և առավելագույն արագություն ապահովելու ուղղությամբ: Բարձր որակ ունեցող օպտիկամանրաթելային կապն այժմ հասանելի է Ստեփանակերտի որոշ փողոցների բնակիչներին: Որպեսզի բոլորն օգտվեն այդ ծառայությունից, մենք շարունակում ենք ակտիվ աշխատել:

**-Այս ամենը որքանո՞վ է նպաստել նոր բաժանորդներ ներգրավելուն:**

-Մեր սպասումներն արդարացել են: Մատուցվող ծառայությունների որակը բարձրացնելուց ու դրանք մատչելի դարձնելուց հետո «Ղարաբաղ Տելեկոմ»-ից սկսել են օգտվել հազարավոր նոր բաժանորդներ: Տարվա ընթացքում ինտերնետ բաժանորդների թիվը աճել է ավելի քան 10 անգամ՝ հատելով 10000-ի սահմանը: Տարեվերջի դրությամբ ունենք բջջային կապի ավելի քան 82000 բաժանորդ, անշարժ հեռախոսակապի՝ ավելի քան 22000 և անլար ֆիքսված հեռախոսակապի՝ ավելի քան 8000 բաժանորդ:

**-«Ղարաբաղ Տելեկոմ»-ի բաժանորդներին ի՞նչ նորություն է սպասվում 2012 թվականին:**

-Մենք ունենք նախագծեր, որոնք դեռ ընթացքի մեջ են: Դրանցից է օպտիկամանրաթելային կապի ընդլայնման ու զարգացման ծրագիրը: Բացի այդ, այս տարի ընկերությունն ակտիվ աշխատանքներ է սկսել 2011 թվականին ձեռք բերված 3-րդ սերնդի համակարգի սարքավորումների տեղադրման ուղղությամբ՝ արտասահմանից հրավիրելով համապատասխան մասնագետների: Այն հնարավորություն կտա ընդլայնելու ծառայությունները՝ տրամադրելով նորերն ու ժամանակակիցները:

**Ստեփանակերտում և շրջկենտրոններում ֆիքսված հեռախոսակապի հին և ֆիզիկապես մաշված անալոգային կայանները փոխարինել ենք թվային կայաններով՝ այսպիսով բարձրացնելով կապի որակը: Երկար տարիներ գյուղական բնակավայրերը զրկված էին գծային ցանցից, այժմ, շնորհիվ անլար ֆիքսված տերմինալների, այդ կապով են ապահովված բոլոր այն բնակավայրերը, որտեղ առկա է բջջային ծածկ**



***«Արցախգազ» ՓԲԸ տնօրեն Սեյրան Միքայելյան.***

*«Գլխավոր առաջնահերթությունն ամեն տարի մնում է անվտանգության ապահովումը: Մեզ վստահված է յուրաքանչյուր արցախցու կյանք. իրավունք չունենք թերացման պատճառով վտանգել այն»*

**-Պարոն Միքայելյան, որո՞նք են եղել «Արցախգազ»-ի առաջնահերթությունները 2011 թվականին:**

-Նախորդ տարի նպատակադրվել էինք բարելավել ծառայությունների մատուցման որակը: Ինչը կատարել ենք՝ համապատասխան հիմնախնդիրները վերհանելով և լուծման ուղիներ մշակելով: Գլխավոր առաջնահերթությունն ամեն տարի մնում է անվտանգության ապահովումը: Մեզ վստահված է յուրաքանչյուր արցախցու կյանք. իրավունք չունենք թերացման պատճառով վտանգել այն: Հետևաբար այս ուղղությամբ կատարելագործել ենք ձեռնարկվող միջոցառումները: Բարձրացրել ենք իրազեկվածության մակարդակը հաղորդակցական համակարգի զարգացման, տեղեկատվական ծրագրերի, ժամանակակից հաշվողական տեխնիկայի ներդրման միջոցով: Ավելի մեծ ուշադրություն ենք դարձրել «1-04» ծառայության կատարելագործմանը: Նոր աստիճանի ենք հասցրել հանրապետության շրջաններում գազամատակարարման ծառայություններից օգտվելու արդյունավետությունը: «Արցախգազ»-ում ստեղծել ենք նաև միասնական համակարգ, որի շնորհիվ այսօր բաժանորդները կարող են վճարումը կատարել առանց ավանդական գրքույկի: Ուշադրությունից դուրս չի մնացել ընկերության աշխատակիցների սոցիալական վիճակը. բարձրացրել ենք ամսական միջին աշխատավարձը: Զուգահեռաբար արդիականացրել ենք «Արցախգազ»-ի նյութատեխնիկական բազան:

**-Ի՞նչ հաջողություններով է նշանավորվել տարին:**

-Մեր կազմակերպությունում ստեղծվել են լաբորատորիաներ, որոնք զինվել են ժամանակակից սարքավորումներով:

Արդյունքում՝ այսօր կարող ենք սպասարկել մեր՝ 26000 կենցաղային բաժանորդներին և 1000-ից ավելի տնտեսավարող սուբյեկտներին տրամադրված հաշվիչները: Տարին առանձնացել է նաև կազմակերպչական աշխատանքների արդյունավետ կատարմամբ: Կարգավորվել

ֆիկացված է 84 բնակավայր: Երկնագույն վառելիքի պահանջարկն ակնհայտորեն աճում է. 2005-2010թթ. բնական գազի սպառման ծավալն ավելանում էր միջինը 16%-ով, իսկ միայն 2011-ին, նախորդ տարվա հետ համեմատած, աճել է մոտ 11%-ով:

-Արցախում լուրջ աշխատանքներ են կատարվում էլեկտրաէներգիայի արտադրության ծավալներն ավելացնելու ուղղությամբ: Արդեն նաև երևացող ձեռքբերումներ կան: Դա հաշվի առնելով՝ նոր բնակավայրերի գազաֆիկացման լայնամասշտաբ աշխատանքներ դեռ չեն

# ԵՐԿՆԱԳՈՒՅՆ ՎԱՌԵԼԻՔԻ ՊԱՀԱՆՋԱՐԿՆ ԱՎԵԼԱՆՈՒՄ Է

## «Արցախգազ»-ի համար առաջնայինն անվտանգ գազամատակարարումն է

Արցախում գազի ողջ պահանջարկը բավարարվում է ներմուծման հաշվին: Խնդիրն ստացված ծավալներն արդյունավետ, առանց կորուստների և անվտանգ բաշխելն է: «Արցախգազ» ՓԲԸ-ի տնօրեն Սեյրան Միքայելյանը վստահեցնում է, որ այդ հարցերում ընկերությունը չի թերացել: Ավելին, նոր համակարգեր և ժամանակակից տեխնիկա են ներդրել, ստեղծել լաբորատորիաներ և արդիականացրել վճարման կարգը:

է օրենսդրական դաշտը, հաստատվել է կազմակերպության միջնաժամկետ ծրագիրը: Իսկ ամենակարևոր ձեռքբերումը կադրային ոլորտում է: Լուրջ աշխատանքներ ենք տարել կադրերի պատրաստման, վերապատրաստման, որակավորման, վերաորակավորման ուղղությամբ: Կարող եմ վստահ ասել՝ այսօր ունենք թիմ, որը պատրաստ է և կարող է աշխատել:

**-Արցախի բնակավայրերի ո՞ր տոկոսն է գազաֆիկացված:**

-ԼՂՀ բնակչության մեջ 40372 պոտենցիալ բաժանորդներից փաստացի գազաֆիկացված են 25851-ը կամ 64%-ը, իսկ այլ գազասպառողները 810 են: Ընդհանուր առմամբ՝ ընկերությունը սպասարկում է 26661 բաժանորդների: 2011 թվականին նրանց քանակն ավելացել է բնակչության մասով՝ 701-ով, իսկ կազմակերպությունների մասով՝ 83-ով: Հանրապետության 8 քաղաքներից գազաֆիկացված են 7-ը, իսկ 292 գյուղերից՝ 77-ը: Ընդհանուր առմամբ՝ գազա-

**-Մատակարարված բնական գազի դիմաց վճարումների հավաքագրումն առանց խնդիրների՞ է իրականանում:**

-2011-ին իրացված բնական գազի դիմաց գանձումների ցուցանիշներն աճել են 35%-ով: Ի տարբերություն նախորդ տարիների՝ գանձումների իրականացման գործընթացում արձանագրվում է կայուն դինամիկա: Բնակչության կողմից սպառված բնական գազի դիմաց պարտքերի մարումն իրականանում է 100%-ով, իսկ հիմնարկների մասով՝ 70%-ով, քանի որ դեռ կան որոշակի, սակայն լուծման ենթակա խոչընդոտներ:

**-Պարոն Միքայելյան, նոր բնակավայրեր գազաֆիկացնելու ծրագիր ունե՞ք:**



**Նոր աստիճանի ենք հասցրել գազամատակարարման ծառայություններից օգտվելու արդյունավետությունը: Ստեղծել ենք նաև միասնական համակարգ, որի շնորհիվ այսօր բաժանորդները կարող են վճարումը կատարել առանց ավանդական գրքույկի**

նախատեսվում: Ըստ պահանջի՝ դրանք կիրականացվեն գազատարների հարևանությամբ գտնվող բնակավայրերում, ինչը մեծ ծախսեր չի պահանջի: Բնակավայրերի ցանկն առայժմ վերջնականապես հստակեցված ու հաստատված չէ:

www.tax.nk.am ■ թեժ գիծ (+374 47) 974-758



***«Արցախէներգո» ՓԲԸ գլխավոր տնօրեն Տիգրան Ծատրյան.***

*«Տեղական էլեկտրաէներգիայի արտադրության ծավալը տարեցտարի ավելանում է, և կապված հանրապետությունում նոր ՀԷԿ-երի կառուցման հետ՝ այն հետագա տարիներին ևս աճի միտում կունենա»*

**Քաղաքական անկախությունից հետո նաև էներգետիկ անկախության ձգտող Արցախի համար 2011 թվականը հաջող տարի էր. աճել են էլեկտրաէներգիայի արտադրության ծավալները: Արտադրությունից ոչ պակաս կարևոր է արտադրանքը սպառողին հասցնելը, սպառված էլեկտրաէներգիայի դիմաց վճարումները հավաքագրելը և այդ միջոցներով վաղուց մաշված բաշխման ցանցերը վերականգնելը: Այդ կարևոր առաքելությունը «Արցախէներգո» ՓԲԸ-ին է վստահված, որն ավանդաբար հանրապետության խոշոր հարկատուների առաջին շարքերում է: Ընկերության գլխավոր տնօրեն Տիգրան Ծատրյանը «Հարկատու» ամսագրին պատմել է, թե բազմաթիվ ծրագրերից որոնք են կյանքի կոչվել 2011 թվականին:**

**-Պարոն Ծատրյան, ի՞նչ արդյունքներով է տարին ամփոփել «Արցախէներգո»-ն:**

-2011 թվականը նախատեսված ծրագրերի իրականացման առումով նպաստավոր էր: Այս անգամ էլ, ինչպես տարիներ շարունակ, «Արցախէներգո» ընկերությունը Արցախի խոշոր հարկատուներից մեկն է շնորհիվ գլխավորապես էլեկտրաէներգիայի սպառման ծավալների ավելացման: Եթե վերջին տարիներին սպառված էներգիայի ծավալների աճը կազմել է միջինը 4-5%, ապա 2010 թվականի համեմատ 2011-ի աճը՝ ավելի քան 11%, այսինքն՝ գերազանցել է նախորդ տարվա ցուցանիշը 26մլն կվտ/ժ-ով՝ կազմելով 259մլն կվտ/ժ: Էլեկտրաէներգիայի սպառման՝ տարեցտարի ավելացող ծավալներն ապահովելու նպատակով ընկերությունը յուրաքանչյուր տարվա համար կազմում է բաշխիչ ցանցերի ընթացիկ շահագործումն ապահովող վերանորոգումների ծրագիր, ըստ որի՝ կատարվում են համապատասխան աշխատանքներ: 2011-ը նշանավորվել է նաև բաժանորդների սպասարկման որակի բարձրացմամբ, ինչի համար այս տարի կառուցել ենք օդային նոր գծեր՝ 0.4, 10, 35 կՎ լարման, տրանսֆորմատորային ենթակայաններ: Արտադրական հզորությունների ավելացման պատճառով համապատասխան էներգատեղակայանքները փոխարինել ենք ավելի հզորներով և էլեկտրաֆիկացրել մի շարք բնակավայրեր:

**-Իսկ հին ցանցերի բարեկարգումը ծրագրում եղե՞լ է:**

-Նոր օդային գծերի և տրանսֆորմատորային ենթակայանների կառուցմանը համընթաց մշտապես կատարում ենք նաև գործողների ընթացիկ վերանորոգում, որը կրում է շարունակական բնույթ: Յուրաքանչյուր տարվա համար հաստատում ենք ժամանակացույց, որից ելնելով աշխատանքների իրականացումը նախատեսում ենք՝ ըստ դրանց առաջնահերթության: 2011 թվականի սկզբին հանրապետության 21 գյուղական բնա-

# ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԻԱՅԻ ՊԱՀԱՆՋԱՐԿՆ ԱՎԵԼԱՆՈՒՄ Է

## «Արցախէներգո»-ն էլեկտրաֆիկացրել է նոր բնակավայրեր

կավայրեր էլեկտրաֆիկացված չէին: Դրանցից մեկը Մարտակերտի շրջանի Ջրաբերդ գյուղն է, իսկ մնացած քսանը գտնվում են Քաշաթաղի շրջանում: Բնակավայրերից յոթը 2011-ի ընթացքում էլեկտրաֆիկացվել են, որից հինգը՝ ընկերության սեփական միջոցներով և ուժերով: Այսօր դեռ անմխիթար վիճակում է գտնվում էլեկտրատեղակայանքների մեծ մասը, հատկապես՝ ցածր լարման ցանցերում:

**-Ի՞նչ կորուստներ են եղել:**

-Այս տարի ավելի քիչ էին: Կորուստները լինում են տեխնիկական և կոմերցիոն: Եթե առաջին դեպքում տեխնոլոգիական բնույթի են, ապա մյուս դեպքում հիմնականում արդյունք են բաժանորդների անբարեխիղճ վերաբերմունքի: Սակայն դա նույնպես հասցրել ենք նվազագույնի. համեմատելով 2010-ի ցուցանիշների հետ՝ 2011-ին կորուստները նվազել են 0.5%-ով: Դա կապված է նաև ցանցերի կառուցման և վերակառուցման հետ:

**-Փոխվե՞լ է տեղական և ներմուծված էլեկտրաէներգիայի ծավալների միջև համամասնությունը վերջին տարիներին:**

-«Արցախէներգո»-ն ապրանքի մի մասը գնում է ՀՀ-ից, մյուս մասը՝ հենց տեղում: Էլեկտրաէներգիայի ծեռքբերումը մատակարար ընկերություններից կախված է հիմնականում Արցախում գտնվող ՀԷԿ-երի արտադրած էլեկտրաէներգիայի ծավալից, որը, իր հերթին՝ ջրի առատությունից: Բայց ընդհանուր առմամբ տեղական էլեկտրաէներգիայի արտադրության ծավալը տարեցտարի ավելանում է, և կապված հանրապետությունում նոր ՀԷԿ-երի կառուցման հետ՝ այն հետագա տարիներին ևս աճի միտում կունենա:

**-Ի՞նչպիսին են վարձավճարների հավաքագրման ցուցանիշները 2011-ին:**

-Անշուշտ, դեբիտորական պարտքի հավաքագրման բարձր ցուցանիշը յուրաքանչյուր կազմակերպության համար կարևոր չափանիշ է: Մեր ընկերության համար չափազանց դժվար է պարտքի դիմաց գումարների հավաքագրումը, քանի որ մեր բաժանորդների թիվն անցնում է մի քանի տասնյակ հազարից: Վերջին մեկ տարվա ընթացքում բավական ջանքեր ենք ներդրել, որպեսզի բաժանորդները սպառված էլեկտրաէներգիայի դիմաց վճարումները ժամանակին կատարեն: Բարեբախտաբար, արդյունքում ունենք դեբիտորական պարտքերի հավաքագրման բարձր տոկոս: Դա պահպանելու և ավելի բարձրացնելու համար շարունակելու ենք միջոցներ ձեռնարկել:



**-Փոխվե՞լ են սպառված էլեկտրաէներգիայի ծավալները:**

-Վերջին մի քանի տարվա վիճակագրական տվյալների համաձայն՝ ավելանում են նոր բաժանորդները: Նկատվել է նաև աճ՝ գործող բաժանորդների կողմից էլեկտրաէներգիայի սպառման ծավալներում: Պահանջարկի մեծացումը հավանաբար պայմանավորված է տնտեսության զարգացմամբ:



**-2012-ին ի՞նչ նորություններ կլինեն:**

-Ինչպես նախորդ տարի, այս տարի նույնպես նախատեսում ենք իրականացնել բազմաթիվ ծրագրեր: Կառուցելու ենք 110/35/10 կՎ լարման «Աղավնո» համակարգային ենթակայանը և վերակառուցելու 35/10 «Մաղավուզ» ենթակայանը: Մեծ հույսեր ենք կապում նոր, փոքր ՀԷԿ-երի կառուցման հետ՝ էլեկտրաէներգիայի գնային քաղաքականության հարցում: Հուսով եմ, որ կկարողանանք նախկին մակարդակում պահել էլեկտրաէներգիայի սակագները և զսպել գնաճը:

www.tax.nk.am ■ թեժ գիծ (+374 47) 974-758



*«Արցախբանկ» ՓԲԸ վարչության նախագահ Կամո Ներսիսյան.*

*«2011-ից որդեգրել ենք «Հասանելի լինել յուրաքանչյուր արցախցու» սկզբունքը»*

**-2011-ին նշեցինք ԼՂՀ 20-ամյակը: Հոբելյանական տարին ի՞նչ ձեռքբերումներով առանձնացավ «Արցախբանկ»-ի համար:**

-Տարվա ընթացքում ակտիվ գործել ենք՝ ընդլայնելով գործունեության ոլորտները: Բանկի զարգացման հետագա ուղին հարթելու նպատակով տարբեր միջոցներ ենք ձեռնարկել: Առանձնակի ուշադրություն ենք դարձրել կադրերի վերապատրաստման գործընթացին: Բարելավել ենք վարկավորման, ռիսկերի կառավարման, գործընթացների թափանցիկությունն ապահովելու ընթացակարգերը և կանոնակարգվածությունը, տարածքային ստորաբաժանումների գործունեությունը, կատարել ենք փոփոխություններ բանկի ներքին՝ վարչակազմակերպական կառուցվածքում: Ցուցանիշների առումով տարին ավելի քան կայուն էր: Բանկի շահութաբերությունը, ըստ կապիտալի, կազմել է գրեթե 16%, ըստ ակտիվների՝ ավելի քան 2%: Նախորդ տարվա համեմատ ընդհանուր կապիտալն աճել է գրեթե 14, վարկային պորտֆելը՝ մոտ 36 և բանկի կողմից թողարկված պլաստիկ քարտերի քանակը՝ ավելի քան 55%-ով, իսկ ակտիվներն աճել են գրեթե 30%-ով: «Արցախբանկ»-ը մշտապես աջակցում է երկրի զարգացման ծրագրերին: Դրա համար բանկի բաժնետերերն ու ղեկավարներն այս տարի արժանացել են ԼՂՀ նախագահի պարգևներին՝ հայրենանվեր գործունեության համար:

**-Գործունեության վերջին տարիների ցուցանիշների համեմատությունը առաջինների հետ ի՞նչ է ցույց տալիս:**

-15-ամյա աշխատանքի ընթացքում «Արցախբանկ»-ը, աջակցելով հաճախորդներին նոր բարձունքների նվաճման գործում, պարբերաբար տարբեր հաջողությունների է հասել: 2011-ի տարեվերջին բանկի հաճախորդների թիվը դարձել է ավելի քան 44 հազար, որից մոտ 42 հազարը ֆիզիկական անձինք են: Համեմատության համար նշենք, որ 2007-ին ընդամենը 13723-ն էին ֆիզիկական անձինք: Անցյալ տարի վարկային հաշիվները մոտ 16հազ. էին, ժամկետային ավանդային հաշիվները՝ 3660: Բանկի վարկային պորտֆելը կազմել է ավելի քան 48մլրդ դրամ, ինչը 1997-ի նույն ցուցանիշը գերազանցում է մոտ 300, 2003-ինը՝ ավելի քան 8, իսկ 2007-ի ցուցանիշը՝ մոտ 4 անգամ: Բանկի ժամկետային ավանդների պորտֆելը 42մլրդ դրամ է, այսինքն՝ 1997-ի ցուցանիշի համեմատ աճել է ավելի քան 260, 2003-ի՝ մոտ 8 և 2007-ի համեմատ՝ ավելի քան 5 անգամ:

**-Պլաստիկ քարտերը դժվար մուտք գործեցին մեր առօրյա: Փոխվե՞լ է այսօր իրավիճակը:**

-Նշեմ, որ բանկը «Արմենիան Քարդ»(ArCa) ազգային վճարային համակարգի համահիմնադիրներից է: Հասարակությանն աջակցելով ժամանակի հրամայականի հետ հարմարվելու գործում՝ կարող ենք վկայել, որ քարտերից օգտվողների թիվը գնալով մեծանում է: Եթե 2007-ին բանկը թողարկել է ընդամենը 1467, 2009-ին՝ 10542 քարտ, ապա 2011-ին բանկի քարտապաններն արդեն 26000 են, իսկ բանկոմատները՝ 29: Այսօր հաճախորդը կարող է ձեռք բերել ArCa Classic, ArCa Gold, ArCa Business, ArCa Gift, ArCa Pension, Maestro, MasterCard Standart, MasterCard Gold, MasterCard Business դեբետավարկային քարտեր: Բանկն իր քարտապաններին ընձեռում է մի շարք առավելություններ, այդ թվում՝ օվերդրաֆտի՝ վարկային գծի ստացման հնարավորություն, իսկ քարտային հաշվում առկա մնացորդի վրա հավելագրվում են տոկոսներ՝ տարեկան առավելագույնը 6%: Մոտ ապագայում նախատեսում ենք հաճախորդներին ընձեռել նաև բանկոմատների միջոցով կոմունալ վճարումներ կատարելու հնարավորություն, ինչպես նաև՝ ներդնել «Բանկ-հաճախորդ» համակարգը:



# 15 ՏԱՐԻ՝ ԱՐՑԱԽՈՒՄ ԵՎ ԱՐՑԱԽԻ ԿՈՂՔԻՆ

## «Արցախբանկ»-ը քայլում է հասարակության պահանջներին ընդառաջ

ԱՐՑԱԽԲԱՆԿ ARTSAKHBANK

**2011** թվականը հոբելյանական էր ոչ միայն ԼՂՀ-ի, այլև «Արցախբանկ»-ի համար: Այն ՀՀ բանկերից միակն է, որը 15 տարի առաջ հիմնադրվեց Արցախում և այսօր էլ գործում է նրա ողջ տարածքում: ԼՂՀ Կենտրոնական բանկի և «Խնայբանկ»-ի հիմքի վրա կազմավորված ՓԲԸ-ն իր առաջնայնությունն է համարում աջակցությունը սոցիալական և տնտեսական ծրագրերի իրականացմանը, փոքր և միջին բիզնեսի կայացմանն ու զարգացմանը: Այն զբաղվում է բարեգործությամբ, ֆինանսավորում է կրթության, մշակույթի, սպորտի և առողջապահության աջակցմանն ուղղված ծրագրերը: Բանկն իր ներդրումն ունի նաև աշխատատեղերի ստեղծման գործում:



**«Արցախբանկ»-ը մշտապես աջակցում է երկրի զարգացման ծրագրերին: Դրա համար բանկի բաժնետերերն ու ղեկավարներն այս տարի արժանացել են ԼՂՀ նախագահի պարգևներին՝ հայրենանվեր գործունեության համար**

**-Ի՞նչ այլ նորույթներ է առաջարկում բանկը:**

-«Արցախբանկ»-ը, ընդունելով ժամանակի մարտահրավերները, անընդհատ կատարելագործում է իր ծառայությունները՝ ընդառաջ գնալով հաճախորդների պահանջներին: Տարվա ընթացքում շուկայում ներկայացել ենք նորույթներով: Հաճախորդներին բավական շահավետ պայմաններով առաջարկել ենք «Ամանոր» և «Gold» ավանդատեսակները: Առևտրի ոլորտում գործունեություն իրականացնող տնտեսվարող սուբյեկտների համար մշակել ենք «Հասարակ» վարկատեսակը: Օրինակելի հաճախորդ լինելու դեպքում նրանք կկարողանան համալրել շրջանառու միջոցներն՝ առանց ավելորդ փաստաթղթերի: ԼՂՀ և ՀՀ բնակչության սպառողական կարիքները բավարարելու և գյուղատնտեսությունը զարգացնելու նպատակով ներդրել ենք «Համատեղ» վարկատեսակը: Այն տրամադրվում է վարկային դրական պատմություն ունեցող 18-60 տարեկան ֆիզիկական անձանց՝ մինչև 18 ամիս մարման ժամկետով, նվազագույնը 100000 դրամ գումարով՝ վարկավորման համար անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը ներկայացնելու պահից՝ աշխատանքային մեկ օրվա ընթացքում: Դյուրինացվել են նաև գործող ծառայությունների պայմանները, կրճատվել են վարկավորման համար պահանջվող լրացուցիչ փաստաթղթերը: Ներդրել ենք ԱՊՊԱ վկայագրերի կնքման համակարգ:

**-Բանկը շարունակո՞ւմ է մասնակցել պետական ծրագրերին:**

-Անշուշտ, ընդգրկված ենք պետական վարկավորման մի շարք ծրագրերում. համագործակցում ենք «Արցախի ներդրումային», «Գյուղի և գյուղատնտեսության աջակցության» ու «Գերմանահայկական» հիմնադրամների հետ, իսկ ՀՀ-ում՝ «Ազգային հիփոթեքային ընկերություն» ՓԲԸ-ի, «Գյուղատնտեսության ֆինանսավորման կառույց»-ի և «Բնակարան երիտասարդներին» ՈՒՎԿ-ի հետ: Օրինակ՝ տարվա ընթացքում «Արցախի ներդրումային հիմնադրամ»-ի հետ համագործակցության շրջանակներում բանկի տրամադրած հիփոթեքային վարկերի մնացորդը կազմել է ավելի քան 4մլրդ դրամ, ՓՄՁ աջակցության շրջանակներում տրամադրած վարկերի մնացորդը՝ ավելի քան 5մլրդ:

**-Հանրապետության բոլոր շրջաններում ներկայացվա՞ծ է բանկը:**

-Հիմնադրման առաջին տարիներին ունեինք ընդամենը 5 մասնաճյուղ, իսկ այսօր՝ 18: Տասներկուսը գործում են Լեռնային Ղարաբաղում, վեցը՝ Երևանում: 2011-ից որդեգրել ենք «Հասանելի լինել յուրաքանչյուր արցախցու» սկզբունքը: Դրանով առաջնորդվելով անցյալ տարի նոր մասնաճյուղ ենք բացել Քարվաճառում՝ ընդգրկելով ԼՂՀ բոլոր շրջանները: Ընթացքի մեջ են մյուսների վերանորոգման և արդիականացման աշխատանքները: Բարելավել ենք նաև ՀՀ մասնաճյուղերի գործունեության պայմանները: Առաջիկայում նախատեսում ենք առավել ընդլայնել ցանցը՝ երեք տարվա կտրվածքով մասնաճյուղերի թիվը հասցնելով 27-ի:

**-Նախորդ ֆինանսա-տնտեսական ճգնաժամը լուրջ հարված հասցրեց բանկային համակարգին: Որքանո՞վ է «Արցախբանկ»-ը պատրաստ ճգնաժամի հավանական նոր ալիքին:**

-Միջազգային վերջին ճգնաժամը բավական լուրջ սպառնալիք էր նաև տեղական բանկային համակարգի համար, սակայն դժվարությունները կարողացանք հաղթահարել: Քանի որ ԼՂՀ-ն միջազգային շուկայի հետ առանձնապես կապված չէ, կարծում եմ՝ ճգնաժամի նոր ցնցումներն առանձնապես ազդեցություն չեն ունենա մեր բանկի գործունեության վրա: Համենայն դեպս, փոխարժեքի կտրուկ տատանումների և իրացվելիության խնդիրների ծագման պարագայում մենք կձեռնարկենք համարժեք միջոցներ:

ԱՐՑԱԽԲԱՆԿ
ARTSAKHBANK

*Նվաճենք բարձրունքները միասին*

Ստեփանակերտ, Կնունյացների 25 Հեռ.՝ (+37447) 943412
Ֆաքս.՝ (+37447) 971542

www.am.am, www.artsakhbank.am

# ԿՈԿՈՐԴԻԼՈՍԱԲՈՒԾՈՒԹՅՈՒՆ՝
## ԱՆԱՍՆԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿ ԵՎ ԶԲՈՍԱՇՐՋԱՅԻՆ ԲԻԶՆԵՍ



Աշխարհում կոկորդիլոսների բուծարաններն ամենաշատը Թայլանդում են. այստեղ կան 30 ֆերմա և ավելի քան 900 անհատ արտադրող, որոնք միաժամանակ պահում են 200000 կոկորդիլոս

### ՎՐԱՍՏԱՆՈՒՄ ԿՈԿՈՐԴԻԼՈՍ ԵՆ ԲՈՒԾԵԼՈՒ

Անդրկովկասյան հարևան երկրները միահամուռ տարաշխարհիկ կենդանիներ են բուծում: ՀՀ-ն ու ԼՂՀ-ն ջայլամաբուծության ոլորտում են առաջին քայլերն անում, հարևան Վրաստանն էլ ուժերը փորձում է կոկորդիլոսաբուծության մեջ: Ըստ mignews.com կայքի՝ կոկորդիլոսների ֆերմա է բացվելու երկրի արևելքում՝ Ցաիշի գյուղում, որտեղ այս սողունների բնական կեցության համար անհրաժեշտ պահեստավորված ջուր կա: 2 տարի առաջ Արգենտինայից Վրաստան բերված կոկորդիլոսի 4 ձվից երեքը հարմարվել են տեղական պայմաններին, որից էլ եզրակացրել են, որ տնտեսապես շահութաբեր է կոկորդիլոսների ֆերմա ստեղծելը: Այս կենդանիներից ստանում են կաշի, միս, ինչը

միջազգային շուկայում մեծ պահանջարկ ունի: Փորձագետները ենթադրում են, որ եթե հաջողվի զանգվածային վերամշակում սկսել, Վրաստանը կկարողանա արժանի դիրք գրավել, որպես կոկորդիլոսի մսի և կաշվի մատակարար:



## ԿՈԿՈՐԴԻԼՈՍՆԵՐԻ ԱՄԵՆԱՄԵԾ ՖԵՐՄԱՆ ԵՎՐՈՊԱՅՈՒՄ

Վրաստանի կոկորդիլոսների ֆերմային իր չափերով գերազանցելու է Ղրիմի ֆերման: Ավելին, ըստ Ալուշտայի ակվարիումի սեփականատեր Վիկտոր Ժիլենկոյի՝ այն լինելու է ամենախոշորը Եվրոպայում: Ինչպես հաղորդում է focus.ua-ն, դեկտեմբերին Ալուշտա քաղաքի ակվարիումում ծնվել են 77 կոկորդիլոսներ, ընդհանուր առմամբ դրանք 90-ն են: Ֆերման նախատեսում են հիմնել 2012-ին՝ մինչև առողջարանային շրջանի սկսվելը:

**Թայլանդում կոկորդիլոսները կրկեսից փախչում են, իսկ Եվպատորիայում դառնում կրկեսային «արտիստներ»: Ալիգատորներն ու կայմանները Ղրիմի այս քաղաքի կրկեսում ներկայանում են զարմանալի համարներով, որոնցից մեկը կոչվում է «Երգող կոկորդիլոսների երգչախումբ»**

## ՖԵՐՄԱՆԵՐԻՑ ԿՈԿՈՐԴԻԼՈՍՆԵՐ ԵՆ ՓԱԽՉՈՒՄ

Ինչքան էլ հետխորհրդային 2 պետությունները ոգևորվեն իրենց նոր հաջողությամբ, միևնույնն է, առայժմ չեն կարող մրցել Թայլանդի հետ: Վերջինս միջազգային շուկայում կոկորդիլոսի և դրա կաշվի ամենախոշոր մատակարարներից է: Աշխարհում կոկորդիլոսների բուծարաններն ամենաշատը Թայլանդում են. այստեղ կան 30 ֆերմա և ավելի քան 900 անհատ արտադրող, որոնք միաժամանակ պահում են 200000 կոկորդիլոս: Ամեն տարի, սակայն, կոկորդիլոսներն անծրևոտ եղանակին փախչում են ֆերմաներից: Ինչպես հայտնում է «РИА Новости»-ն, նախորդ տարվա աշնանը Թայլանդի ջրհեղեղը վերջին կես դարում ամենաաղետալին էր և շարունակվեց 2 ամիս: Այդ ընթացքում 100 կոկորդիլոսներ լքեցին իրենց խորտակված ֆերման երկրի կենտրոնում:



## ԿՈԿՈՐԴԻԼՈՍՆԵՐԸ «ԽԹԱՆՈՒՄ ԵՆ» ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

Թայլանդում կոկորդիլոսները կրկեսից փախչում են, իսկ Եվպատորիայում դառնում կրկեսային «արտիստներ»: Ալիգատորներն ու կայմանները Ղրիմի այս քաղաքի կրկեսում ներկայանում են զարմանալի համարներով, որոնցից մեկը կոչվում է «Երգող կոկորդիլոսների երգչախումբ»: Սողուններից շատերն էլ ցուցադրվում են ամռանը դելֆինարիաներում: Ուկրաինայի նման փորձը հաշվի առնելով՝ մանկական ժամանցային կենտրոնի՝ «Լուկոմորյե»-ի տնօրենը որոշել է կոկորդիլոսների տուրիստական առաջին ֆերման բացել երկրում: Այս մասին հայտնում է mignews.com.ua՝ նշելով, որ այն զարդարելու են հայտնի մուլտֆիլմի՝ «Կոկորդիլոս Գենայի» մոտիվներով: Անվտանգության հարցը, ըստ կայքի, առաջնային է, քանի որ այցելուները հիմնականում երեխաներն ու նրանց ծնողներն են լինելու: «Լուկոմորյե»-ում պահելու են 50 սողուն՝ 4-6 տեսակի: Պաշտոնական բացումը խոստանում են այս տարվա հուլիսի 1-ին:

**Տնտեսապես շահութաբեր է կոկորդիլոսների ֆերմա ստեղծելը:Այս կենդանիներից ստանում են կաշի, միս, ինչը միջազգային շուկայում մեծ պահանջարկ ունի**

www.tax.nk.am ■ թեժ գիծ (+374 47) 974-758

Artsakh Brandy Company

Since 1922




ՓԲԸ «Արցախ Բրենդի Կոմպանի»
ԼՂՀ, ք. Ասկերան, Նելսոն Ստեփանյան 5
Հեռ./Ֆաքս՝ (+374 76) 77 0 99
www.artsakh-brandy.am

Ֆիրմային խանութներ
ք. Ստեփանակերտ, Ազատամարտիկների 16
ք. Երևան, Կիևյան 18, Սարյան 24